



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐՆ ՏԱՐԻ 03 (460) «09» փետրվարի 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ		
31	«Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի ՆՀ-884-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-347-Ն հրամանագիրը.....	3
32	««Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-348-Ն հրամանագիրը.....	4
33	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-107-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-349-Ն հրամանագիրը.....	5
34	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-350-Ն հրամանագիրը.....	6
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
35	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 97-Ն որոշումը.....	7
36	«Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի ձևը, տրամադրման կարգը, ինչպես նաև քաղաքացու ցանկությամբ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 98-Ն որոշումը.....	8
37	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 942-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 107-Ն որոշումը.....	15
ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
38	«Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման կարգն ու պայմանները, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները հաստատելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 16-Ն հրամանը.....	17

39	«Վիլեն Սարգսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը դեղատնային գործունեության համար տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 18-Ա հրամանը.....	28
40	«Անհատ ձեռնարկատեր Դիանա Բաբայանի բժշկական օգնության և սպասարկման իրականացման վայրի փոփոխման մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 23-Ա հրամանը...	29
41	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2009 թվականի հուլիսի 20-ի թիվ 19/Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 20-Ն հրամանը.....	30
42	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրների տրամադրման և դրանց գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N ՆՀ-31-Ա հրամանը.....	31
43	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 7-Ն հրամանը...	35
44	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 04-Ա հրամանը.....	37
45	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 05-Ա հրամանը.....	38
46	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայրի գործունեության դադարեցման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 06-Ա հրամանը.....	39
47	«Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 12-Ն հրամանը.....	40
ՏԱՄԼԵՐԵՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿՃՈՒՐԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԹՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
48	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/1396/02/19 որոշումը.....	44
49	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/0199/02/21 որոշումը.....	54

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՆՀ-884-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՆՀ-884-Ն հրամանագրի.

1) 1-ին կետի՝

ա. 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 6-րդ ենթակետից հանել «Էկոնոմիկայի և» բառերը,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին ենթակետ.

«8.1) սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարություն.»,

դ. 11-րդ ենթակետում «ֆինանսների» բառից հետո լրացնել «և էկոնոմիկայի» բառերը.

2) 3-րդ կետում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետ.

«1.1) պետական վերահսկողական ծառայություն.»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին ենթակետ.

«3.1) նյութական վնասների հարցերի կոմիտե.»:

2. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ մեկամսյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող որոշումներ:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. փետրվարի 9
Ստեփանակերտ
ՆՀ-347-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնելով Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայությունը՝ հաստիքներով և աշխատակիցներով հանդերձ:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության իրավահաջորդն է:

3. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն հրամանագրից բխող իրավական ակտերի ընդունման ուղղությամբ:

4. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Արցախի Հանրապետության պետական բյուջեում սույն հրամանագրով պայմանավորված անհրաժեշտ վերաբաշխումներ կատարելու վերաբերյալ:

5. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. փետրվարի 9
Ստեփանակերտ
ՆՀ-348-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-107-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի սահմանումից բխող մի շարք միջոցառումների մասին» ՆՀ-107-Ն հրամանագրով հաստատված՝

1) N 1 հավելվածի՝

ա) 14-րդ կետի 1-ին ենթակետի, 18-րդ և 39-րդ կետերի «Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը,» բառերը, 17-րդ կետի 3-րդ ենթակետի «Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարին,» բառերը և 5-րդ գլխի «ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ,» բառերը հանել,

բ) 19-րդ կետի 8.1-ին ենթակետը, 32.1-ին և 47.1-ին կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) N 2 հավելվածի 13.1-ին և 19.1-ին կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. փետրվարի 9
Ստեփանակերտ
ՆՀ-349-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-108-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված հավելվածի՝

1) 26-րդ կետում «Նախագահի վերահսկողական ծառայությունը» բառերը փոխարինել «պետական վերահսկողական ծառայությունը» բառերով.

2) 105-րդ կետի 4.1-ին ենթակետում՝

ա. «Արցախի Հանրապետության» բառերից հետո լրացնել «պետական վերահսկողական ծառայության պետին,» բառերը,

բ. «կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին,» բառերից հետո լրացնել «նյութական վնասների հարցերի կոմիտեի նախագահին,» բառերը:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. փետրվարի 9
Ստեփանակերտ
ՆՀ-350-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 փետրվարի 2022թ.

N 97-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 459 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,5 հեկտար գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Նորագյուղի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 փետրվարի 2022թ.

N 98-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՉՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել՝

1) հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք տրամադրելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Արցախի Հանրապետության քաղաքացու, Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի ցանկությամբ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

_____ (լիազոր մարմնի անվանումը)

_____ 20 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ N _____

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՉՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղաքացի _____

(անունը, հայրանունը, ազգանունը)

_____ (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, վայրը)

_____ (անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան, համարը, տալու ամսաթիվը և տրամադրող մարմինը)

տրամադրվել է հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք

Պետ _____

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Կիրառելի է միայն սույն փաստաթղթի բնօրինակը:

Սույն փաստաթուղթն ապահովում է փաստաթղթի տիրոջ իրավունքների իրացումը հանրային ծառայությունների բնագավառում:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՉՍՏԱՆԱԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՏՐԱՄԱՂՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ) ստանալուց հրաժարված և նույնականացման քարտ չստացած կամ առանց հանրային ծառայությունների համարանիշի ամրագրման նույնականացման քարտ ստացած, կամ սոցիալական ապահովության քարտից կամ տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշից հրաժարված Արցախի Հանրապետության քաղաքացուն, ինչպես նաև հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ) ստանալուց հրաժարված կամ սոցիալական ապահովության քարտից կամ տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշից հրաժարված Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացուն, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձին, փախստականին (միասին այսուհետ՝ քաղաքացի) հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը (այսուհետ՝ տեղեկանք) տրամադրվում է Արցախի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կամ քաղաքացու բնակության վայրի տարածքային անձնագրային ծառայության (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից՝ քաղաքացու դիմումի հիման վրա:

3. Տեղեկանքը ստանալու համար քաղաքացին լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դիմում,

2) Արցախի Հանրապետության քաղաքացին՝ անձնագիրը և դրա պատճենը, Արցախի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացին և օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի ճամփորդական փաստաթուղթ ունեցող անձը՝ Արցախի Հանրապետությունում կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը և դրա պատճենը, Արցախի Հանրապետությունում առանց կացության կարգավիճակի բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացին՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված անձնագիրը և անձնագրի՝ նոտարական կարգով վավերացված թարգմանությունը և դրանց պատճենները, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձը՝ Արցախի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը և դրա պատճենը, փախստականի կարգավիճակ ունեցող անձը՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը և դրա պատճենը,

3) մինչև 16 տարեկան քաղաքացին՝ անձնագիր չունենալու դեպքում՝ ծննդյան վկայականը և դրա պատճենը,

4) սոցիալական ապահովության քարտից կամ տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշից հրաժարվելու դեպքում՝ սոցիալական ապահովության քարտը կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքը՝ բացառությամբ այն դեպքի, երբ քաղաքացին կորցրել է դրանք, որի մասին նշում է կատարվում դիմումում:

4. Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերի բնօրինակները, պատճենների հետ համեմատելուց հետո, լիազոր մարմինն անմիջապես վերադարձնում է քաղաքացուն:

5. Մինչև 16 տարեկան քաղաքացու համար դիմումը ստորագրում և ներկայացնում է նրա ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչ: Դատարանի վճռով անգործունակ ճանաչված քաղաքացու դիմումը ստորագրում և ներկայացնում է նրա խնամակալը:

6. Տեղեկանքի տրամադրումը մերժվում է, եթե՝

1) քաղաքացուն հատկացվել է հանրային ծառայությունների համարանիշ պարունակող նույնականացման քարտ:

2) բացակայում են քաղաքացուն՝ նախկինում հատկացված տեղեկանքն անվավեր համարելու հիմքերը, և քաղաքացին իր դիմումի մեջ չի նշել տեղեկանքի կորստյան կամ փոխանակման մասին:

3) տեղեկանք ստանալու համար ներկայացված փաստաթղթերը թերի են:

7. Քաղաքացու կողմից ներկայացված փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիազոր մարմինը քաղաքացուն առաջարկում է մեկօրյա ժամկետում լրացնել դրանք: Եթե նշված ժամկետում սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում, լիազոր մարմինը մերժում է տեղեկանքի տրամադրումը սույն կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով:

8. Տեղեկանքի տրամադրումը մերժելու դեպքում դրա մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է քաղաքացուն՝ նշելով մերժման պատճառը:

9. Լիազոր մարմինը սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո սույն կարգի 6-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացուն է տրամադրում տեղեկանքը: Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված դեպքերում տեղեկանքը տրամադրվում է մինչև 16 տարեկան կամ դատարանի դատավճռով անգործունակ ճանաչված քաղաքացու օրինական ներկայացուցչին:

10. Սույն կարգի 5-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում օրինական ներկայացուցիչը լիազոր մարմին է ներկայացնում անձը և օրինական ներկայացուցիչ լինելը հաստատող փաստաթղթերը:

11. Տեղեկանքի հիման վրա պետական մարմինները կամ պաշտոնատար անձինք ապահովում են քաղաքացու իրավունքների իրացումը:

12. Տեղեկանքը համարվում է անվավեր՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացուն հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու կամ հանրային ծառայությունների համարանիշ պարունակող նույնականացման քարտ տրամադրելու պահից կամ անձը հաստատող փաստաթղթի մասին տեղեկանքում առկա տվյալների փոփոխության դեպքում:

13. Քաղաքացին տեղեկանքի կորստյան դեպքում դրա մասին հայտնում է լիազոր մարմին, որը քաղաքացուն նոր տեղեկանք է տրամադրում՝ սույն կարգի համաձայն:

14. Օգտագործման համար ոչ պիտանի լինելու և (կամ) անձը հաստատող փաստաթղթի մասին տեղեկանքում առկա տվյալների փոփոխության դեպքում քաղաքացին լիազոր մարմին է դիմում տեղեկանքը փոխանակելու նպատակով:

15. Տեղեկանքը փոխանակելու համար քաղաքացին լիազոր մարմին է ներկայացնում սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և փոխանակման ենթակա տեղեկանքը:

16. Տեղեկանքը փոխանակելու վերաբերյալ դիմումը և մյուս փաստաթղթերը ստանալուց հետո, սույն կարգի 6-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում, լիազոր մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացուն է տրամադրում տեղեկանքը:

17. Քաղաքացուն տեղեկանք տրամադրելու դիմումի և դիմումների հաշվառման մատյանի ձևերը, տեղեկանքի համարի ձևավորման կարգը սահմանում է Արցախի Հանրապետության ոստիկանության պետը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ, ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑՈՒ, ԱՐՑԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ՝ ՔԱՂԱՔԱՑՈՒԹՅՈՒՆ
ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ, ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ**

1. Սույն կարգով կանոնակարգվում են Արցախի Հանրապետության քաղաքացուն, Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացուն, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձին, փախստականին՝ իր ցանկությամբ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու հետ կապված հարաբերությունները:

2. «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» օրենքի համաձայն՝ հանրային ծառայությունների համարանիշն ամրագրվում է Արցախի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտում, օտարերկրյա քաղաքացու՝ Արցախի Հանրապետությունում կացության քարտում, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի ինքնությունը հավաստող փաստաթղթերում: Մինչև «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» օրենքի ուժի մեջ մտնելը տրված օտարերկրյա քաղաքացու՝ Արցախի Հանրապետությունում կացության քարտում, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի ինքնությունը հավաստող փաստաթղթերում հանրային ծառայությունների համարանիշն ամրագրելու համար անձը կարող է կացության քարտը, քաղաքացիություն չունեցող անձի կամ փախստականի ինքնությունը հավաստող փաստաթուղթը ներկայացնել Արցախի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:

3. Սույն կարգի համաձայն՝ հանրային ծառայությունների համարանիշ հատկացվում է Արցախի Հանրապետության քաղաքացուն, եթե նա չունի սցիալական քարտ կամ հանրային ծառայությունների համարանիշ կամ ունի նույնականացման քարտ, որում հանրային ծառայությունների համարանիշն ամրագրված չէ, Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացուն, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձին, փախստականին, եթե նրանք չունեն սցիալական քարտ կամ հանրային ծառայությունների համարանիշ և դիմել են հանրային ծառայությունների համարանիշ ստանալու համար:

4. Հանրային ծառայությունների համարանիշ ստանալու համար Արցախի Հանրապետության քաղաքացին, Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացին, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձը, փախստականը (այսուհետ՝ քաղաքացի) Արցախի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կամ իր բնակության վայրի տարածքային անձնագրային ծառայություն (այսուհետ՝ լիազոր մարմին) է ներկայացնում՝

1) դիմում,

2) Արցախի Հանրապետության քաղաքացին՝ անձնագիրը կամ առանց հանրային ծառայությունների համարանիշի ամրագրման նույնականացման քարտը և դրա պատճենը, Արցախի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացին և օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված քաղաքացիություն չունեցող անձի ճամփորդական փաստաթուղթ ունեցող անձը՝ Արցախի Հանրապետությունում կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթը և դրա պատճենը, Արցախի Հանրապետությունում առանց կացության կարգավիճակի բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացին՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված անձնագիրը և անձնագրի նոտարական կարգով վավերացված թարգմանությունը, Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձը՝ Արցախի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված քաղաքացիություն չունեցող անձի կացության

վկայականը և դրա պատճենը, փախստականի կարգավիճակ ունեցող անձը՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը,

3) մինչև 16 տարեկան քաղաքացին՝ անձնագիր չունենալու դեպքում՝ ծննդյան վկայականը և դրա պատճենը,

4) քաղաքացին՝ նախկինում հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք ստացած լինելու դեպքում՝ նշված տեղեկանքը՝ բացառությամբ այն դեպքի, երբ քաղաքացին կորցրել է այն, որի մասին նշում է կատարվում դիմումում:

5. Հանրային ծառայությունների համարանիշ ստանալու դիմումում նշվում են քաղաքացու հետևյալ անհատական տվյալները՝

- 1) անունը, ազգանունը, հայրանունը,
- 2) ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,
- 3) սեռը,
- 4) բնակության վայրը,
- 5) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան, համարը, ում կողմից է տրվել և տալու ամսաթիվը:

6. 16 տարին չլրացած քաղաքացուն հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին դիմումը ստորագրում և ներկայացնում է նրա ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչ: Դատարանի վճռով անգործունակ ճանաչված քաղաքացու դիմումը ստորագրում և ներկայացնում է նրա խնամակալը:

7. Լիազոր մարմինը ստուգում է դիմումում նշված և քաղաքացու կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տվյալների համապատասխանությունը:

8. Դիմումի ընդունման վերաբերյալ գրառում է կատարվում դիմումների հաշվառման մատյանում, որի համապատասխան դաշտում ստորագրում է դիմումը ներկայացնող անձը:

9. Եթե սույն կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերը թերի են կամ դրանցում առկա են անճշտություններ, լիազոր մարմինն առաջարկում է մեկօրյա ժամկետում վերացնել դրանք: Եթե նշված ժամկետում փաստաթղթերում առկա թերությունները չեն վերացվում, ապա հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին դիմումը մերժվում է: Լիազոր մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր պատասխան է տրամադրում քաղաքացուն մերժման պատճառի և կրկին դիմելու ընթացակարգի վերաբերյալ:

10. Քաղաքացուն հանրային ծառայությունների համարանիշը հատկացվում է սույն կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի ձևով:

11. Բնակչության պետական ռեգիստրում ըստ բնակության վայրի չհաշվառված անձին հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելիս նրա տվյալները մուտքագրվում են բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգ:

12. Հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքը հանձնվում է անձամբ քաղաքացուն կամ նրա ներկայացուցչին՝ լիազորագիր ներկայացնելու դեպքում: 16 տարին չլրացած կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված քաղաքացու հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքը հանձնվում է նրա օրինական ներկայացուցչին:

13. Սույն կարգի 6-րդ և 12-րդ կետերով նախատեսված դեպքերում օրինական ներկայացուցիչը լիազոր մարմին է ներկայացնում անձը և օրինական ներկայացուցիչ լինելը հաստատող փաստաթղթերը:

14. Հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքում ամրագրվում են հանրային ծառայությունների համարանիշը, հանրային ծառայությունների համարանիշը տրամադրելու համար հիմք հանդիսացած անձը հաստատող փաստաթղթի տվյալները, լիազոր մարմնի անվանումը, տրամադրման ամսաթիվը: Հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքը կնքվում է լիազոր մարմնի կնիքով:

15. Հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի կորստյան դեպքում քաղաքացին հայտնում է լիազոր մարմին, որը քաղաքացուն նոր տեղեկանք է տրամադրում՝ սույն կարգի համաձայն:

16. Հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքն օգտագործման համար ոչ պիտանի լինելու և (կամ) հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքում առկա անհատական տվյալների

փոփոխության դեպքում քաղաքացին լիազոր մարմին է դիմում տեղեկանքը փոխանակելու նպատակով:

17. Տեղեկանքը փոխանակելու վերաբերյալ դիմումը և մյուս փաստաթղթերն ստանալուց հետո սույն կարգի 9-րդ կետով նախատեսված՝ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու դիմումի մերժման հիմքի բացակայության դեպքում լիազոր մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացուն է տրամադրում հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին նոր տեղեկանք:

18. Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացուն և Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձին տրված հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու վերաբերյալ տեղեկանքը (եթե հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու վերաբերյալ տեղեկանքը հատկացվել է օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված անձը հաստատող փաստաթղթի հիման վրա) փոխանակվում է անձին Արցախի Հանրապետությունում բնակության իրավունքը (կացության կարգավիճակը) հաստատող փաստաթուղթ տրամադրելուց հետո՝ անձի դիմումի հիման վրա:

19. Հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքը համարվում է պաշտոնական փաստաթուղթ, որի հիման վրա պետական մարմինները կամ պաշտոնատար անձինք ապահովում են քաղաքացու իրավունքների իրացումը:

20. Տեղեկանքը համարվում է անվավեր՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացուն հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանք հատկացնելու պահից կամ տեղեկանքում առկա անձը հաստատող փաստաթղթի մասին տվյալների փոփոխության դեպքում:

21. Մինչև «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» օրենքն ուժի մեջ մտնելը հատկացված սոցիալական ապահովության քարտի կորստյան կամ օգտագործման համար ոչ պիտանի լինելու կամ սոցիալական ապահովության քարտում առկա անհատական տվյալների փոփոխության դեպքում քաղաքացին կարող է դիմել լիազոր մարմին սույն կարգի համաձայն հանրային ծառայությունների համարանիշ ստանալու համար:

22. Հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու վերաբերյալ դիմումների, դիմումների հաշվառման մատյանի և հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի ձևերը սահմանվում են Արցախի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 փետրվարի 2022թ.

N 107-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 942-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 3-ի N 52 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 942-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի փետրվարի 9-ի N 107-Ն որոշման

«Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«27» դեկտեմբերի 2012թ. N 942-Ն որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Միջազգային կառույցների և հումանիտար համագործակցության վարչություն
2. Երկկողմ հարաբերությունների և սփյուռքի վարչություն
3. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն
4. Ադրբեջանի բաժին
5. Քարտուղարություն
6. Անձնակազմի կառավարման և իրավական հարցերի բաժին
7. Հյուպատոսական բաժին
8. Պետական արարողակարգի բաժին
9. Ֆինանսական բաժին
10. Վարչատեխնիկական սպասարկման բաժին»:

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

2022 թվականի փետրվարի 1-ի

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ
ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՄԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՑՅՈՒ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 16-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) անհատական պաշտպանության միջոցների կիրառման կարգն ու պայմանները՝ համաձայն հավելված 1-ի.

2) անհատական պաշտպանության միջոցների սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները՝ համաձայն հավելված 2-ի.

3) անհատական պաշտպանության միջոցների ցանկը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Մ. ՀԱՅՐԻՅԱՆ

2022 թվականի փետրվարի 1
ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Անհատական պաշտպանության միջոցների (այսուհետ՝ ԱՊՄ) կիրառման կարգի և պայմանների, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները տարածվում են Արցախի Հանրապետության տարածքում գործող պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման, իրականացման ու գնահատման գործընթացներին մասնակցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ բժշկական կազմակերպություններ) մասնագետների վրա:

2. Փակ տարածքներում դիմակ կրելը պարտադիր է բոլորի համար, բացառությամբ՝

1) երեխաների՝ 0-5 տարեկանը ներառյալ.

2) բնակության վայրում (տանը, բնակարանում).

3) Արցախի Հանրապետության նախագահի, Արցախի թեմի առաջնորդի, Պետական նախարարի, Ազգային ժողովի նախագահի, Գերագույն դատարանի նախագահի գլխավորությամբ անցկացվող արարողակարգային միջոցառումների ժամանակ ելույթ և ուղերձ ունեցողների և միջոցառման անմիջական մասնակիցների (բացառությամբ՝ լրագրողների և սպասարկող անձնակազմի).

4) անձնական ավտոտրանսպորտային միջոցներով երթևեկողների (բացի ոչ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնելիս).

5) հեռուստահաղորդումների հեռարձակման ժամանակ սուրդոթարգմանություն իրականացնողների.

6) լսողության և խոսքի տարբեր աստիճանի խանգարումներ ունեցողների (որոնք շրթունքների շարժումներին հետևելով են ընկալում խոսքը) և նրանց հետ աշխատողների.

7) ծխելու, խմելու և սնվելու ժամանակ.

8) Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված սանիտարական կանոններով սահմանված այլ դեպքերի.

9) հեռուստահաղորդավարների՝ հեռուստահաղորդումների և հեռուստածրագրերի հեռարձակման ժամանակ հեռուստատեսային տաղավարում միայնակ գտնվելիս.

10) հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ ունեցող անձանց.

11) կոզնիտիվ խանգարումներ ունեցող անձանց.

12) դեմքի վնասվածք ունեցող կամ բերանի շրջանում դիմաձևոտային միջամտության ենթարկված անձանց:

3. Բժշկական կազմակերպություններում բուժանձնակազմի կողմից բժշկական դիմակները ընտրվում և կիրառվում են՝ ելնելով վարակի փոխանցման ռիսկից, իրավիճակից և բուժանձնակազմի գործունեության հանգամանքից:

4. Բժշկական կազմակերպությունում և COVID-19 կասկածելի կամ հաստատված անձանց խնամք և հսկողություն իրականացնող վայրերում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ժամանակ օգտագործվող ԱՊՄ կիրառման պայմանները ներկայացված են սույն հրամանի աղյուսակ 1-ում:

Կարգավորում	Թիրախային անձնակազմ կամ պացիենտ	Միջոցառումներ	ԱՊՄ
Հիվանդանոցային բժշկական կազմակերպություն			
Հիվանդասենյակ	Բուժանձնակազմ	COVID-19 պացիենտի անմիջական խնամք	1.Շնչադիմակ N95 կամ FFP2 ստանդարտ կամ համարժեք 2.Արտահագուստ 3.Ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց (ակնոց կամ դիմային վահանակ)
		COVID-19 պացիենտի աերոզոլային միջոցառումներ	1.Շնչադիմակ N95 կամ FFP2 ստանդարտ կամ համարժեք 2.Արտահագուստ 3.Ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց 5.Գոգնոց՝ եթե խալաթը անջրաթափանց չէ
	Մաքրող, ախտահանող անձնակազմ	COVID-19 պացիենտի հիվանդասենյակի մաքրում և ախտահանում	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3.Անուր ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ) 5.Փակ աշխատանքային կոշիկ
	Այցելու	COVID-19 պացիենտի սենյակ մուտքի իրականացում	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
Պացիենտի տարանցման այլ վայրեր (օրինակ, պալատ, միջանցք)	Ամբողջ անձնակազմը, ներառյալ բուժաշխատողները	Ցանկացած գործողություն, որը կապ չունի COVID-19 պացիենտի հետ	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ
Տեսակավորում	Բուժանձնակազմ	Նախնական սկրինինգ՝ առանց ուղղակի շփման	1. Բժշկական դիմակ 2.Բժշկական խալաթ 3.Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
	Սուր շնչառական վարակին բնորոշ ախտանշաններով պացիենտ	Ցանկացած	1.Բժշկական դիմակ 2.Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
	Շնչառական ախտանշաններ չունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ
Լաբորատորիա	Լաբորանտ	Գործողություններ շնչառական նմուշների հետ	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3.Ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց (եթե կա ցայտման ռիսկ)
Վարչական տարածքներ	Ամբողջ անձնակազմը, ներառյալ բուժաշխատողները	Վարչական առաջադրանքներ, որոնք կապ չունեն COVID-19 պացիենտի հետ	1.Բժշկական դիմակ 2.Բժշկական խալաթ (բուժաշխատողները)
Առողջության առաջնային պահպանման կազմակերպություն			
Խորհրդատվության սենյակ	Բուժաշխատողներ	Ֆիզիկական զննում շնչառական ախտանշանով պացիենտին	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3.Ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց
	Բուժաշխատողներ	Ֆիզիկական զննում առանց շնչառական ախտանշանի պացիենտին	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ 3. Նախազգուշական միջոցառումներ և ռիսկերի գնահատում

	Շնչառական ախտանշաններ ունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ, եթե տանելի է
	Շնչառական ախտանշաններ չունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ
	Մաքրող անձնակազմ	Շնչառական ախտանշանով պացիենտների հետ խորհրդատվությունների միջև և դրանից հետո	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Անուր ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ) 5. Ճտքակոշիկ կամ փակ աշխատանքային կոշիկ
Սպասարահ	Շնչառական ախտանշաններ ունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Անմիջապես տեղափոխում պացիենտին մեկուսացման սենյակ կամ առանձին տարածք, իսկ անհնարինության դեպքում՝ այլ պացիենտներից առնվազն 1,5մ հեռավորության ապահովում
	Շնչառական ախտանշաններ չունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ
Վարչական տարածք	Ամբողջ անձնակազմը, ներառյալ բուժաշխատողները	Վարչական խնդիրներ	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ (բուժաշխատողներ)
Տեսակավորում	Բուժաշխատողներ	Նախնական սկրինինգ առանց ուղղակի շփման	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ 3. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
	Շնչառական ախտանշաններով պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
	Շնչառական ախտանշաններ չունեցող պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ
Բնակության վայր, որտեղ իրականացվում է COVID-19 պացիենտի խնամք			
Տուն	Շնչառական ախտանշաններով պացիենտ	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
	Խնամակալ	Պացիենտի սենյակ մուտք գործող, եթե չի ցուցաբերում ուղղակի խնամք կամ օգնություն	1. Շնչադիմակ N 95 կամ FFP2 ստանդարտ կամ համարժեք
	Խնամակալ	COVID-19 պացիենտին ցուցաբերում է ուղղակի խնամք, կամ իրականացնում է աթոռակի, մեզի կամ թափոնների մշակում	1. Շնչադիմակ N 95 կամ FFP2 ստանդարտ կամ համարժեք 2. Ձեռնոց 3. Գոգնոց (եթե կա ցայտման ռիսկ)
	Բուժաշխատող	COVID-19 պացիենտին տանն ուղղակի խնամքի կամ օգնության տրամադրում	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց
Մուտքի կետեր			
Վարչական տարածքներ	Ամբողջ անձնակազմը	Ցանկացած	1. Բժշկական դիմակ 2. Բժշկական խալաթ (բուժաշխատողները)

Սկրինինգի տարածք	Անձնակազմ	Առաջին սկրինինգ (ջերմաչափում)՝ առանց ուղղակի շփման	1.Բժշկական դիմակ 2.Բժշկական խալաթ (բուժաշխատողները) 3.Ձեռնոցներ 4.Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
	Անձնակազմ	Երկրորդ սկրինինգ (այսինքն՝ հարցազրույց ուղևորների հետ ջերմության կլինիկական ախտանշանների վերաբերյալ և ճամփորդության պատմության ճշտում)	1.Բժշկական դիմակ 2.Ձեռնոց
	Մաքրող անձնակազմ	Տարածքի մաքրում, որտեղ տենդով ուղևորներ են հայտնաբերվում	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3.Ամուր ձեռնոցներ 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ), ճտքակոշիկ կամ փակ աշխատանքային կոշիկ
Ժամանակավոր մեկուսացման տարածք	Անձնակազմ	Մուտք մեկուսացման տարածք՝ առանց ուղղակի օգնության ցուցաբերման	1.Բժշկական դիմակ 2.Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
	Անձնակազմ, բուժաշխատող	Պացիենտին բժշկական կազմակերպություն տեղափոխելիս	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3.Ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց
	Մաքրող անձնակազմ	Մեկուսացման տարածքի մաքրում	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3.Ամուր ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ), ճտքակոշիկ կամ փակ աշխատանքային կոշիկ
Շտապօգնության մեքենա կամ տեղափոխող փոխադրամիջոց	Բուժաշխատողներ	COVID-19 կասկածելի պացիենտի տեղափոխում բժշկական կազմակերպություն	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3.Ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց
	Վարորդներ	Եթե միայն վարում է մեքենան COVID-19 կասկածելի պացիենտին տեղափոխելու ժամանակ, վարորդի խցիկն առանձնացված է COVID-19 պացիենտից	1. Բժշկական դիմակ
		Օգնում է COVID-19 կասկածելի պացիենտին մեքենան ստեցնել-իջեցնելիս	1.Բժշկական դիմակ 2.Արտահագուստ 3.Ձեռնոց 4.Աչքի պաշտպանության միջոց
		Ուղիղ շփում չկա COVID-19 կասկածելի պացիենտի հետ, սակայն վարորդի և պացիենտի խցիկներն առանձնացված չեն	1.Բժշկական դիմակ 2.Տարածական հեռավորության պահպանում՝ առնվազն 1,5մ
	COVID-19 հիվանդության կասկածով պացիենտ	Ուղեգրում և փոխադրում դեպի բժշկական կազմակերպություն	1.Բժշկական դիմակ, եթե տանելի է

	Մաքրում	Մաքրում COVID-19 հիվանդության կասկածով պացիենտների բժշկական կազմակերպություն տեղափոխումից հետո	1. Բժշկական դիմակ 2. Արտահագուստ 3. Ամուր ձեռնոց 4. Աչքի պաշտպանության միջոց (եթե կա օրգանական կամ քիմիական նյութերի ցայտման ռիսկ), 5. Ճտքակոշիկ կամ փակ աշխատանքային կոշիկ
--	---------	--	---

5. ԱՊՄ-ի օգտագործումը հիմնվում է ռիսկի ազդեցության մակարդակի և հարուցչի փոխանցման շարժընթացի վրա: Տարբեր սցենարների համար ԱՊՄ-ի սահմանված նվազագույն քանակը կորոնավիրուսային հիվանդությամբ պացիենտներին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ժամանակ ներկայացված է սույն հրամանի աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Բուժանձնակազմ	Կասկածելի դեպք	Հաստատված դեպք թեթև ախտանշանով	Հաստատված դեպք ծանր ախտանշանով
	Հավաքածուների քանակը մեկ պացիենտի համար	Օրական մեկ պացիենտի համար սահմանված քանակը	
Բուժքույր	1-2	6	6-12
Բժիշկ	1	2-3	3-6
Մաքրում և ախտահանում իրականացնող անձնակազմ	1	3	3
Այլ ծառայություններ մատուցող	0-2	3	3
Ընդհանուր	3-6	14-15	15-24

Հավելված 2

Արցախի Հանրապետության
առողջապահության նախարարի
2022 թվականի փետրվարի 1-ի N 16-Ն հրամանի









**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՄԱՆԻՏԱՐԱՆԱՄԱՃԱՐԱԿԱՑՅՈՒՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ**



1. Անհատական պաշտպանության միջոցները (այսուհետ՝ ԱՊՄ), այդ թվում՝ դիմակը հագնելուց առաջ, ձեռքերը մշակվում են ալկոհոլի հիմքով ախտահանիչ/հականեխիչ միջոցով կամ լվանում են օճառով: Դիմակը կրում են այնպես, որ այն փակի քիթը և բերանը՝ առանց ճեղքերի դեմքի և դիմակի միջև: Օգտագործման ժամանակ դիմակին չեն հպվում, հպվելու դեպքում ձեռքերը մշակում են սպիրտ պարունակող միջոցով և լվանում օճառով: Մեկանգամյա դիմակների կրկնակի օգտագործում, ինչպես նաև խոնավացած դիմակների օգտագործում չի թույլատրվում: Դիմակը հանելիս բռնում են կապիչներից (չհպվելով դիմակի առաջային մասին) և անմիջապես նետում թափոնների համար նախատեսված փակվող ռոտնակային կառավարման աղբարկղի մեջ, մշակում են ձեռքերը սպիրտ պարունակող ախտահանիչ միջոցով կամ լվանում օճառով:

2. Շնչառական օրգանների պաշտպանության համար պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման, իրականացման ու գնահատման գործընթացներին մասնակցող բժշկական կազմակերպությունների անձնակազմը հաճախորդների հետ աշխատանքի ընթացքում սպահովվում է բավարար քանակությամբ մեկանգամյա օգտագործման դիմակներով (ելնելով դիմակները առնվազն 3 ժամը 1 անգամ փոխելու հնարավորությունից):

3. ԱՊՄ հագնելու և հանելու ընթացակարգերը ներկայացված են սույն հրամանի աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ԱՊՄ հագնելու ընթացակարգ		
1. Իրականացնել ձեռքերի հիգիենայի միջոցառումներ		
2. Հագնել անջրաթափանց խալաթ կամ կոստյում՝ ընտրելով համապատասխան տեսակն ու չափսը		1. Կապել պարանոցի և գոտկատեղի երիզները 2. Բացվածքը պետք է լինի մեջքի կողմից
3. Հագնել միանգամյա օգտագործման դիմակ		1. Հագնել այնպես, որ ծածկի քիթը, բերանն ու կզակը 2. Ուղղել վերին առաձգական մասն այնպես, որպեսզի քթին հարմար նստի 3. Հետևից ամրացնել ռետինե օղակապով 4. Ուղղել, որպեսզի հարմար հավի
4. Ստուգել շնչադիմակի պիտանելիությունը		1. Ներշնչել՝ դիմակը պետք է ներքաշվի 2. Արտաշնչել՝ ստուգելով դիմակի եզրերի տակից հոսակորստի հնարավորությունը
5. Հագնել պաշտպանական ակնոց: Ուղղել, որ հարմար նստի	 	1. Դնել ակնոցները՝ ամրացնելով աղեղնակների կամ օղակապի միջոցով 2. Հագնել պաշտպանիչ ակնոցներն՝ ամրացնելով օղակապի միջոցով հոնքերի մակարդակին
6. Հագնել ձեռնոցները		1. Ձեռնոցները հագնել ձեռքերին 2. Ձեռնոցները պետք է ծածկեն խալաթի թևերի բազկակապը
ԱՊՄ հանելու ընթացակարգ		
7. Հանել պաշտպանիչ ակնոցները		1. Բռնել աղեղնակներից կամ օղակապից 2. Վերև բարձրացնելով՝ հանել դեպի երեսի հակառակ կողմը
8. Հանել խալաթը կամ կոստյումը		1. Արձակել կապերը 2. Քաշելով հանել խալաթը պարանոցից և ուսերից 3. Դեպի ներս շրջել արտաքին աղտոտված մակերեսը 4. Ծալել կամ օղակաձև շրջելով հավաքել 5. Նետել հատուկ աղբամանի մեջ

9. Հանել ձեռնոցները		<ol style="list-style-type: none"> 1. Բռնել արտաքին եզրից՝ դաստակի շրջանում 2. Քաշելով հանել՝ հակառակ շրջելով 3. Պահել ձեռնոցը մյուս (հագած) ձեռքում 4. Ձեռնոցը հանած՝ ձեռքի մատը անցկացնել մյուս ձեռնոցի եզրի տակ՝ մինչև դաստակի շրջանը 5. Ներսից քաշելով ու հակառակ շրջելով՝ հանել ձեռնոցն այնպես, որպեսզի ստեղծվի պարկ երկու ձեռնոցների համար 6. Նետել հատուկ աղբամանի մեջ
10. Իրականացնել ձեռքերի հիգիենայի միջոցառումներ		
11. Հանել դիմակը		<ol style="list-style-type: none"> 1. Նախ գլխի վրայով հանել ներքևի օղակապը 2. Այնուհետև հանել վերևի օղակապը 3. Նետել հատուկ աղբամանի մեջ
12. Իրականացնել ձեռքերի հիգիենայի միջոցառումներ		

4. Շնչադիմակների լայնածավալ օգտագործումը (օրինակ՝ N95, FFP2 կամ համարժեք ստանդարտ) նախկինում իրականացվել է բնակչության առողջության պահպանման ոլորտի արտակարգ իրավիճակներում, կապված սուր շնչառական վարակների ժամանակ ԱՊՄ-ի պակասի հետ: Այն իր մեջ ներառում է նույն ախտորոշումով մի քանի պացիենտի համար միննույն շնչադիմակ կրելը՝ առանց այն հանելու, հաշվի առնելով, որ ըստ վերջին տվյալների, շնչադիմակները պահպանում են իրենց պաշտպանական հատկությունը երկարատև օգտագործման ժամանակ: Այնուամենայնիվ, երկարատև (4 ժամից ավելի) օգտագործումը կարող է հանգեցնել անհարմարության և դրանից պետք է խուսափել:

5. Բժշկական կազմակերպություններում ԱՊՄ օգտահանվում է՝ համաձայն Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի մարտի 3-ի թիվ 60-Ն հրամանի:

6. Այլ կազմակերպություններում աշխատատեղերը կահավորվում են փակվող աղբամաններով՝ յուրաքանչյուր սենյակում 1 աղբաման հաշվարկով՝ օգտագործված դիմակները և անհատական պաշտպանության այլ պարագաները նետելու համար: Այլ կազմակերպություններում օգտագործված դիմակները համարվում են ոչ վարակիչ թափոններ: Դրանք հավաքվում են հերմետիկ փակ տոպրակներով և հեռացվում կենցաղային աղբի հետ միասին:

7. ԱՊՄ-ն օգտագործելուց հետո պետք է հանել և զգել համապատասխան թափոնների աղբարկղ, որից հետո լվանալ և ախտահանել ձեռքերը:

Հավելված 3
Արցախի Հանրապետության
առողջապահության նախարարի
2022 թվականի փետրվարի 1-ի N 16-Ն հրամանի

ՑԱՆԿ
ԱՆՀՏՏԱՍԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ
Ձեռնոցներ հետազոտության համար	Ձեռնոցներ հետազոտության համար, նիտրիլային, առանց փոշու, ոչ ստերիլ: Ձեռնոցների երկարությունը գերադասելի է, որ	<ul style="list-style-type: none"> • ԵՄ ստանդարտի հրահանգ 93/42/EEC դաս I, EN 455, • ԵՄ ստանդարտի հրահանգ 89/686/EEC III կատեգորիա, EN 374,

	լինի մինչև նախաբազուկը (օրինակ առնվազն 280մմ երկարություն: Չափերը՝ փոքր, միջին, մեծ) երկարաճիտ ձեռնոցներ, երկարությունը մինչև դաստակի վերևի հատվածը, ցանկալի է մինչև նախաբազուկ	<ul style="list-style-type: none"> • ANSI/ISEA 105-2011, • ASTM D6319-10 կամ դրանց համարժեք
Վիրաբուժական դիմակ	Բժշկական/վիրաբուժական դիմակ, բարձր ջրակայունություն, օդաթափանց, ներքին և արտաքին մակերեսները տարբեր, կառուցվածքային դիզայն, հարմարավետ բերանային հատվածի համար (օր. բաժականման և այլն)	<p>EN 14683 Type IIR performance ASTM F2100 level 2 or level 3</p> <p>Կամ համարժեք:</p> <p>Ջրակայուն առնվազն 120 mmHg ճնշման համար, համաձայն ASTM F1862-07, ISO 22609, կամ համարժեք</p> <p>Օդաթափանց: MIL-M-36945C, EN 14683 annex C, կամ համարժեք ASTM F2101, EN14683 annex B, կամ համարժեք:</p> <p>«Պացիենտների, վիրաբուժական անձնակազմի և սարքավորումների համար, որպես բժշկական արտադրատեսակներ կիրառվող վիրաբուժական արտահագուստ և սպիտակեղեն. Մաս 1. Ընդհանուր պահանջներ» ԳՕՍՏ ԵՆ 13795-1-2011-ին, իսկ դիմակները՝ ՀՍՏ ԳՈՍՏ Ռ 58396-2020 ազգային ստանդարտ:</p>
Համազգեստ	Մեկանգամյա օգտագործման, ջրակայուն, երկարությունը մինչև ճիտքերը, բաց գույնի՝ հնարավոր աղտոտումը տեսանելի լինելու համար, օղակներ մատներին ֆիքսելու համար, էլաստիկ ճարմանդներ թևերին ամրացնելու համար:	<p>Տարբերակ 1: Ջրակայուն EN 13795 բարձր արդյունավետություն կամ AAMI PB70 3 մակարդակի ցուցանիշ և բարձր, կամ համարժեք</p> <p>Տարբերակ 2: արյան մեջ առաջացող պաթոգենների ներթափանցումից պաշտպանված. AAMI PB70 4 մակարդակի ցուցանիշ կամ (EN 14126-B) մարմնի մասնակի պաշտպանվածություն (EN 13034 or EN 14605), կամ համարժեք:</p> <p>«Պացիենտների, վիրաբուժական անձնակազմի և սարքավորումների համար, որպես բժշկական արտադրատեսակներ կիրառվող վիրաբուժական արտահագուստ և սպիտակեղեն. Մաս 1. Ընդհանուր պահանջներ» ԳՕՍՏ ԵՆ 13795-1-2011-ին, իսկ դիմակները՝ ՀՍՏ ԳՈՍՏ Ռ 58396-2020 ազգային ստանդարտ:</p>
Ձեռնոցներ վիրաբուժական, երկարությունը մինչև բազուկ, մեծ (ավելի երկար քան հետագոտության համար ձեռնոցները)	Ձեռնոցներ վիրաբուժական, նիտրիլային, ոչ փոշեպատ, մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ երկարաճիտ, երկարությունը մինչև դաստակի վերև, ցանկալի է մինչև նախաբազուկ:	<ul style="list-style-type: none"> • ԵՄ ստանդարտ հրահանգ 93/42/EEC Class I, EN 455, • ANSI/ISEA 105-2011, • ASTM 6319-10 • Կամ համարժեք: <p>«Պացիենտների, վիրաբուժական անձնակազմի և սարքավորումների համար, որպես բժշկական արտադրատեսակներ կիրառվող վիրաբուժական արտահագուստ և սպիտակեղեն. Մաս 1. Ընդհանուր պահանջներ» ԳՕՍՏ ԵՆ 13795-1-2011-ին, իսկ դիմակները՝ ՀՍՏ ԳՈՍՏ Ռ 58396-2020 ազգային ստանդարտ:</p>
Դիմավահան	Պատրաստված է թափանցիկ պլաստիկից և ապահովում է լավ տեսանելիություն ինչպես հագնողի, այնպես էլ պացիենտի համար. կարգավորելի ժայռվենն ամրանում է գլխի շուրջ և ճակատին, քրտնադիմացկուն (նախընտրելի է), երկարությունը	<ul style="list-style-type: none"> • ԵՄ ստանդարտ հրահանգ 86/686/EEC, EN 166/2002, • ANSI/ISEA Z87.1-2010, <p>Կամ համարժեք: «Պացիենտների, վիրաբուժական անձնակազմի և սարքավորումների համար, որպես բժշկական արտադրատեսակներ կիրառվող վիրաբուժական</p>

	հնարավորություն է ընձեռում լիովին ծածկել դեմքն ամբողջությամբ, այդ թվում՝ կողային հատվածները, բազմակի օգտագործման (պատրաստված է ամուր նյութից, որը կարող է մաքրվել և ախտահանվել) կամ մեկանգամյա օգտագործման համար:	արտահագուստ և սպիտակեղեն. Մաս 1. Ընդհանուր պահանջներ» ԳՕՍՍ ԵՆ 13795-1-2011-ին, իսկ դիմակները՝ ՀՍՍ ԳՈՍՍ Ռ 58396-2020 ազգային ստանդարտ:
Փորձարկման հավաքածու	Շնչառական պաշտպանության համար հերմետիկ սարքերի արդյունավետությունը գնահատելու համար	OSHA 29 CFR 1910.134 Appendix A
Ռեսպիրատոր N95 կամ ավելի բարձր	N95 or FFP2 ռեսպիրատոր կամ ավելի բարձր օդաթափանց, բերանի համար հարմար ձևավորված (օր.՝ բաժականման)	"N95" ռեսպիրատոր համաձայն US NIOSH, կամ "FFP2" համաձայն to EN 149
Դիմակ վիրաբուժական	Բժշկական/վիրաբուժական դիմակ, բարձր ջրակայունություն, օդաթափանց, ներքին և արտաքին մակերեսները տարբեր, կառուցվածքային դիզայն, հարմար բերանային հատվածի համար (օր.՝ բաժականման և այլն)	EN 14683 Type IIR արտադրողականություն ASTM F2100 2 կամ 3 մակարդակ Կամ համարժեք: Ջրակայունություն առնվազն 120 mmHg ճնշման ASTM F1862-07, ISO 22609 հիման վրա, կամ համարժեք Օդաթափանց: MIL-M-36945C, EN 14683 annex C, կամ համարժեք ASTM F2101, EN14683 annex B, կամ համարժեք: «Պացիենտների, վիրաբուժական անձնակազմի և սարքավորումների համար, որպես բժշկական արտադրատեսակներ կիրառվող վիրաբուժական արտահագուստ և սպիտակեղեն. Մաս 1. Ընդհանուր պահանջներ» ԳՕՍՍ ԵՆ 13795-1-2011 - ին, իսկ դիմակները՝ ՀՍՍ ԳՈՍՍ Ռ 58396-2020 ազգային ստանդարտ:
Դիմակ	Ինքնաշեն՝ տնային պայմաններում պատրաստված կամ գործարանային	
Սկրաբ, հագուստ	Տունիկա, գործվածք, սկրաբներ, մեկանգամյա օգտագործման, կարճ թևերով (տունիկա), վերնահագուստի կամ արտահագուստի տակ հագնելու:	
Սկրաբ, տաբատ	Տաբատներ, գործվածք, սկրաբներ, բազմանգամյա կամ մեկանգամյա օգտագործման համար, վերնահագուստի կամ արտահագուստի տակ հագնելու համար	
Պաշտպանիչ ակնոցներ	Հերմետիկ, ճկուն PVC (պոլիվինիլթրոբիդ) շրջանակ, որ համաչափ սեղմելու դեպքում հեշտությամբ համապատասխանեցվի դեմքին, ծածկում է աչքերը և հարակից հատվածները, թափանցիկ պլաստիկից ապակի վնասվածքադիմացկուն և քրտնադիմացկուն, կարգավորվող ժապավեն՝ ամուր ամրացնելու համար, այնպես որ չթուլանա կլինիկական գործունեության ժամանակ, անուղղակի օդափոխում բարձր քրտնադիմացկունությունն ապահովելու համար, կարող է կիրառվել բազմանգամյա	ԵՄ ստանդարտ հրահանգ 86/686/EEC, EN 166/2002, • ANSI/ISEA Z87.1-2010, Կամ համարժեք

	(ախտահանման աշխատանքների համար համապատասխան պայմանների առկայության դեպքում) կամ մեկանգամյա օգտագործման համար:	
--	---	--

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«1» փետրվարի 2022թ.

№ 18-Ա

ք. Ստեփանակերտ

**«ՎԻԼԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և «ՎԻԼԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2020 թվականի փետրվարի 3-ին **դեղատնային գործունեության** համար «ՎԻԼԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված թիվ Կ-ԴԳ-000358 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝ ապահովել

1) լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) «ՎԻԼԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիցենզիայի բնօրինակի կցումը նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Մ.ՀԱՅՐԻՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«9» փետրվարի 2022թ.

№ 23 -Ա

ք. Ստեփանակերտ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԴԻԱՆԱ ԲԱԲԱՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը և անհատ ձեռնարկատեր Դիանա Բաբայանի հայտը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Անհատ ձեռնարկատեր Դիանա Բաբայանի (2014 թվականի հունվարի 17-ին տրված N Ա-XX-000248 լիցենզիա) **ընտանեկան ստոմատոլոգիական** գործունեության իրականացման վայրը՝ ԱՀ, ք.Բերձոր, Խաղաղության 5 հասցեից փոխել ԱՀ ք. Ստեփանակերտ, Այվագովսկու 11/12 հասցեի:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝ ապահովել

1) լիցենզիայի գործունեության իրականացման վայրի վերաբերյալ կատարված փոփոխության մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Մ.ՀԱՅՐԻՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

2022 թվականի փետրվարի 3-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԹԻՎ 19/Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

N 20-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2009 թվականի հուլիսի 20-ի «Տնտեսավարող սուբյեկտների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքանյութական արժեքների հաշվառման քարտերի ձևերը սահմանելու մասին» թիվ 19/Ն հրամանը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

Դ. ՊՈՂՈՍՅԱՆ

2022 թվականի փետրվարի 3
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

08 փետրվարի 2022թ.

ՆՀ-31-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՒԿԻՆԵՐՈՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՍԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 8-ի N 386-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **անհատ ձեռնարկատեր Արարատ Ալեքսանդրի Զամայանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00784 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

2) **անհատ ձեռնարկատեր Արթուր Միքայելի Գասպարյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00785 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

3) **անհատ ձեռնարկատեր Սուրեն Գամբոյի Առուստամյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00786 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

4) **անհատ ձեռնարկատեր Ռոմեն Սուրենի Հարությունյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00787 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

5) **անհատ ձեռնարկատեր Պողոս Իվանի Կարապետյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00262 լիցենզիայի N00004 ներդիր.

6) **անհատ ձեռնարկատեր Սլավա Գեորգիի Ալեքսանյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00417 լիցենզիայի N00004 ներդիր.

7) **անհատ ձեռնարկատեր Յուրիկ Անուշավանի Զամայանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00587 լիցենզիայի N00002 ներդիր.

8) **Ֆիզիկական անձ Անդրանիկ Ջալալի Խաչատրյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00641 լիցենզիայի N00002 ներդիր.

9) **անհատ ձեռնարկատեր Արմեն Վլադիմիրի Խաչիյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00698 լիցենզիայի N00006 ներդիր.

10) **Ֆիզիկական անձ Էռնեստ Ռոբերտի Բեգլարյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00720 լիցենզիայի N00002 ներդիր.

11) **Ֆիզիկական անձ Արթուր Իվանի Ավանեսյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00739 լիցենզիայի N00003 ներդիր.

12) **անհատ ձեռնարկատեր Սասուն Կարենի Աղաջանյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00756 լիցենզիայի N00002 ներդիր:

2. Դադարեցնել`

1) **անհատ ձեռնարկատեր Վլադիմիր Միքայելի Աղաբեկյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00128 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

2) **անհատ ձեռնարկատեր Բորիս Ազադի Բալասյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00180 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

3) **անհատ ձեռնարկատեր Վիտալի Բորիսի Ոսկանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00340 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

4) **Ֆիզիկական անձ Նորայր Վալերիի Մարգարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00476 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

5) **Ֆիզիկական անձ Ալբերտ Համբարձումի Դավթյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00513 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

6) **Ֆիզիկական անձ Գագիկ Միքայելի Պետրոսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00544 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

7) **անհատ ձեռնարկատեր Արթուր Լևոնի Հակոբյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00574 լիցենզիայի և լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունները.

8) **անհատ ձեռնարկատեր Սասուն Մելյրանի Հարությունյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրա-

պետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00588 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

9) **անհատ ձեռնարկատեր Սաղաթել Վաղարշակի Գալստյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00632 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

10) **ֆիզիկական անձ Արմեն Յուրիկի Աբրահամյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00634 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

11) **ֆիզիկական անձ Գրիգորի Արամայիսի Աթայանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00722 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

12) **անհատ ձեռնարկատեր Աշոտ Ռուդոլֆի Աղաբեկյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00729 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

13) **ֆիզիկական անձ Արա Բենյամինի Հայրապետյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00741 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

14) **անհատ ձեռնարկատեր Ռադիկ Ռուբենի Գասպարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00769 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

15) **անհատ ձեռնարկատեր Պողոս Իվանի Կարապետյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00262 լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունը.

16) **անհատ ձեռնարկատեր Գայանե Պետրոսյանի** Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00345 լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունը.

17) **անհատ ձեռնարկատեր Սլավա Գեորգիի Ալեքսանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00417 լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունը.

18) **անհատ ձեռնարկատեր Յուրիկ Անուշավանի Ջամալյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00587 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը.

19) **ֆիզիկական անձ Անդրանիկ Ջալալի Խաչատրյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00641 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը.

20) **անհատ ձեռնարկատեր Արմեն Վլադիմիրի Խաչիյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00698 լիցենզիայի N00005 ներդիրի գործողությունը.

21) **ֆիզիկական անձ Էռնեստ Ռոբերտի Բեգլարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետա-

կան ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00720 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը.

22) **Ֆիզիկական անձ Արթուր Իվանի Ավանեսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00739 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը.

23) **Ֆիզիկական անձ Մասուն Գարենի Աղաջանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00756 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը.

3. Դադարեցված համարել՝ **անհատ ձեռնարկատեր Վլադիմիր Իշխանի Գրիգորյանի** 17.02.2015 թվականին տրամադրված Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՕՆ00429 լիցենզիայի և լիցենզիայի ներդիրի N00001 գործողությունները:

4. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հայկ Խանումյան

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2022 թվականի փետրվարի 9-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՍՈՒՇՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 7-Ն

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝ «Պեկինի 24-րդ ձմեռային օլիմպիական խաղեր» թեմատիկայով երկու նամականիշ՝ համաձայն NN 1, 2 հավելվածների:


2. Գործողության մեջ դնել՝ «Պեկինի 24-րդ ձմեռային օլիմպիական խաղեր» թեմատիկայով 2 նամականիշ՝ համապատասխանաբար սահմանելով անվանագինը՝ 120 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 10000 հատ, անվանագինը՝ 400 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 10000 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ. ԽԱՆՈՒՄՅԱՆ

2022 թվականի փետրվարի 9
ք. Ստեփանակերտ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2022 թվականի փետրվարի 9-ի N 7-Ն հրամանի



Հավելված N 2
Արցախի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2022 թվականի փետրվարի 9-ի N 7-Ն հրամանի



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

27 հունվարի 2022թ.

N 04-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 27.01.2022թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ՍԵՅՐԱՆՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ ք. Մարտունի, Սայաթ-Նովայի փող. 3/4	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
2	«Ա. Վ. Կ.» ՍՊԸ ք. Մարտունի, Կոմիտասի փող., տուն 3	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
3	«ԳՐԵՇՆ ՊԱՐԿ» ՍՊԸ ԱՀ. Մարտունու շրջան, գ. Բերդաշեն	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

04 փետրվարի 2022թ.

N 05-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 03.02.2022թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼԴՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ Ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ԷՄԶԻՉ» ԱԿ ք. Մարտունի, Պ. Սևակի 8	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
2	«ԹԻԷՄ ԲԻԼԳ» ՍՊԸ ք. Ստեփ., Վ. Փափազյան 4	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
3	«ՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ք. Ստեփ., Հեքիմյան փող., շենք 8բ/16	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
4	«ԵՎՐՈՍՏԱՆՍԱՐԳ» ՍՊԸ ք. Ստեփ., Վ. Սարոյան փող., շենք 5/40	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
5	«ՇԻՆ-ՊՈԼՅՈՒՄ» ՍՊԸ ք. Հաղորթ, Ավագյանի փող. թիվ 2/2	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական
6		Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ էներգետիկ
7	«ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ ք. Ստեփ., Վ. Սարգսյան 25ա	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ էներգետիկ
8	«ՍՏԵՓԼՈՒՅՍ» ՍՊԸ ք. Ստեփ., Վ. Վաղարշյան փող., շենք 50/10	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ էներգետիկ
9	«ԳԱՐԵԳԻՆ ՍԵԿ» ՍՊԸ ք. Ստեփ., Բաղրամյան փող., շենք 3/13	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

04 փետրվարի 2022թ.

N 06-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՍԱՄԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 03.02.2022թ. եզրակացությունը և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և 7-րդ կետի պահանջներով

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Դադարեցնել ներքոնշյալ ընկերության տրամադրած լիցենզիայի գործունեությունը՝

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Լիցենզիայի համարը	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը
1	«ԿՈՆՏԱԿՏ» ՍՊԸ ք. Ստեփ., Հ. Հակոբյան 25	ՇԻ-885	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակ-կոմունալ քաղաքակառուցության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

2022 թվականի փետրվարի 04

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ
ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 12-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը»՝ համաձայն N 1 հավելվածի,

2) «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության հրապարակման և ներկայացման կարգը»՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Վ.ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

2022 թվականի փետրվարի 04
ք. Ստեփանակերտ

Օրինակելի ձև

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Գործադիր մարմնի կողմից

« _____ » « _____ » 2022 թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

հասարակական կազմակերպության անվանումը

գործունեություն մասին

հաշվետու տարի

1. Հասարակական կազմակերպության				
1.1. Լրիվ անվանումը				
1.2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)				
1.3. Գտնվելու վայրը				
1.4. Պետական գրանցման համարը				
1.5. Պետական գրանցման օրը, ամիսը, տարին				
1.6. Հեռախոսահամարը				
1.7. Պաշտոնական ինտերնետային կայքը				
1.8. Էլեկտրոնային փոստը				
2. Հասարակական կազմակերպության				
2.1. Անդամների թիվը				
2.2. Միջոցներից օգտված անդամների թիվը				
2.3. Կամավորների թիվը				
2.4. Միջոցներից օգտված կամավորների թիվը				
3. Հաշվետու տարվա ընթացքում գումարած նիստերի քանակը				
3.1. Ժողովի			3.2. Կոլեգիալ կառավարման այլ մարմինների	
4. Իրականացված ծրագրեր				
4.1. Հ/Հ	4.2. Ծրագրի անվանումը	4.3. Վայրը	4.4. Կարգավիճակը	4.5. Հիմնական արդյունքները
5. Տարեկան մուտքերի ընդհանուր գումարը և ստացման աղբյուրներ				
5.1. Հ/Հ	5.2. Դրամական միջոցներ			5.3. Ստացման աղբյուրներ
Ընդամենը				
5.4. Հ/Հ	5.5. Գույք		5.6. Ստացման աղբյուրներ	
Ընդամենը				
6. Օգտագործված միջոցներ				
6.1. Դրամական միջոցներ				
6.2. Գույք				
6.2.1. Հ/Հ	6.2.2. Տեսակը			6.2.3. Արժեքը
Ընդամենը				
7. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու				
7.1. Հ/Հ	7.2. Տեսակը		7.3. Ստացված շահույթը	7.4. Շահույթի օգտագործումը
Ընդամենը				

8. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը

Գից ներկայացվում է՝

- 1) աուդիտորի եզրակացությունը՝ _____ թերթի վրա.
- 2) վերստուգող մարմնի եզրակացությունը՝ _____ թերթի վրա:

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրությունը

անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը

անունը, ազգանունը

1. Հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեության հաշվետվության օրինակելի ձևի (այսուհետ՝ Հաշվետվություն) «ՀԱՍՏԱՏՎԱԾ Է գործադիր մարմնի կողմից» դաշտում նշվում է գործադիր մարմնի կողմից հաշվետվության հաստատման օրը, ամիսը և տարին:

2. Հաշվետվության «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ» դաշտի առաջին մասում նշվում է հաշվետվություն ներկայացնող Կազմակերպության անվանումը, հաշվետու տարին:

3. Հաշվետվության 1.1-ին կետում լրացվում է Կազմակերպության լրիվ անվանումը, 1.2-րդ կետում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), 1.3-րդ կետում՝ Կազմակերպության գտնվելու վայրը, 1.4-րդ կետում՝ Կազմակերպության պետական գրանցման համարը, 1.5-րդ կետում՝ Կազմակերպության պետական գրանցման օրը, ամիսը և տարին, 1.6-րդ կետում՝ Կազմակերպության հեռախոսահամարը, 1.7-րդ կետում՝ Կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքը, 1.8-րդ կետում՝ Կազմակերպության էլեկտրոնային փոստը:

4. Հաշվետվության 2.1-ին և 2.3-րդ կետերում համապատասխանաբար լրացվում են հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ Կազմակերպության անդամների թիվը ու կամավորների թիվը, իսկ 2.2-րդ և 2.4-րդ կետերում՝ հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցների մասով Կազմակերպության միջոցներից օգտված անդամների թիվը ու կամավորների թիվը:

5. Հաշվետվության 3-րդ կետում լրացվում է հաշվետու տարվա ընթացքում գումարած նիստերի քանակը, իսկ 3.1-ին և 3.2-րդ կետերում համապատասխանաբար լրացվում են Կազմակերպության ժողովի և կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերի քանակը: Ընդ որում, հաշվետու տարում նիստեր չգումարելու դեպքում 3-րդ կետում, այդ թվում՝ 3.1-ին և 3.2-րդ կետերում, լրացվում է «0»:

6. Հաշվետվության 4-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության կողմից հանրային միջոցներով իրականացված ծրագրերը՝ 4.1-ին կետում լրացվում է ծրագրի հերթական համարը, 4.2-րդ ու 4.3-րդ կետերում՝ համապատասխանաբար յուրաքանչյուր ծրագրի անվանումը և վայրը, 4.4-րդ ու 4.5-րդ կետերում՝ ծրագրի կարգավիճակը և հիմնական արդյունքները (ծրագրի իրականացման արդյունքում կատարված աշխատանքի համառոտ նկարագրությունը): Մեկից ավելի ծրագրեր իրականացնելու դեպքում ավելացվում են տողեր:

7. Հաշվետվության 5-րդ կետում լրացվում են տարեկան մուտքերը և ստացման աղբյուրները՝ հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության հանրային դրամական միջոցների և (կամ) գույքի չափի, դրանց ստացման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը: Անհրաժեշտության դեպքում ավելացվում են տողեր:

8. Հաշվետվության 6-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության հանրային դրամական միջոցների ծախսման և (կամ) տրամադրված գույքի օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը: Անհրաժեշտության դեպքում ավելացվում են տողեր:

9. Հաշվետվության 7-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն՝ գործունեության տեսակը, ստացված շահույթը և շահույթի օգտագործումը:

10. Հաշվետվությանը կից ներկայացվում է աուդիտորի եզրակացությունը, եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից ֆինանսավորվել է 2 000 000 և ավելի ՀՀ դրամի չափով, և վերստուգող մարմնի եզրակացությունը, եթե Կազմակերպության կանոնադրությամբ

նախատեսված է վերստուգող մարմնի կազմավորում՝ լրացնելով կցվող փաստաթղթերի քանակը:

11. Հաշվետվությունը համարվում է թերի, եթե չի պարունակում «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկություններից որևէ մեկը կամ պարունակում է ակնհայտ հակասություններ:

12. Հաշվետվությունը լրացվում է ՀՀ դրամով:

Հավելված N 2
Արցախի Հանրապետության
Ֆինանսների նախարարի 2022 թվականի
փետրվարի 04-ի N 12-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ

1. Հասարակական կազմակերպությունն իր գործունեության մասին հաշվետվությունը, իսկ աուդիտը պարտադիր լինելու դեպքում, նաև աուդիտորի եզրակացությունը, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հրապարակում է հասարակական կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում, իսկ մինչև դրա շահագործումը Արցախի Հանրապետության առավել տպաքանակ ունեցող մամուլի միջոցով:

2. Հասարակական կազմակերպության կողմից սույն կարգի 1-ին կետում նշված հաշվետվությունը, աուդիտորի եզրակացությունը և վերստուգող մարմնի եզրակացությունը (առկայության դեպքում) սահմանված կարգով հրապարակելը համարվում է լիազոր մարմին ներկայացում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/1396/02/19
Քաղաքացիական գործ ԸԻԴ/1396/02/19
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Մ.Ավանեսյան
 Կ.Սաղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

18-ին հունվարի 2022թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ Հ.Խաչատրյանի
մասնակցությամբ՝ դատավորներ՝ Հ.Աբրահամյանի
 Ա.Աբրահամյանի
 Գ.Գրիգորյանի
 Կ.Ղարայանի

դրնբաց դատական նիստում քննության առնելով ըստ հայցի Արայիկ Մուրադի Ղահրամանյանի ընդդեմ Արմինե Վերդիի և Վերդի Բենիկի Գասպարյանների՝ գումար գանձելու պահանջով ԸԻԴ/1396/02/19 քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2021 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ հայցվոր Ա.Ղահրամանյանի և պատասխանող Ա.Գասպարյանի բերած վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

2019 թվականի մարտի 20-ին Արայիկ Մուրադի Ղահրամանյանը հայցադիմում է ներկայացրել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պատասխանողներ Արմինե Վերդիի և Վերդի Բենիկի Գասպարյաններից հոգուտ իրեն համապարտության կարգով գանձել 6.223.500 (վեց միլիոն երկու հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի մարտի 25-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Նշված որոշման դեմ հայցվոր Ա.Ղահրամանյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանի 2019 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ բողոքը բավարարվել է և Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի մարտի 25-ի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվել:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է հարուցվել է քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի մայիսի 19-ի որոշմամբ որպես հայցի ապահովման միջոց՝ հայցագնի չափով արգելանք է դրվել պատասխանողներ Արմինե Վերդիի և Վերդի Բենիկի Գասպարյաններին սեփականության իրավունքով պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի մայիսի 27-ի որոշմամբ գործով հրավիրվել է նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի օգոստոսի 26-ի որոշումներով նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և գործի վարույթը կասեցվել:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մայիսի 07-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և հրավիրվել նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի հունիսի 26-ի որոշումներով նշանակվել է լրացուցիչ դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և գործի վարույթը կասեցվել:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 07-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և հրավիրվել նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի փետրվարի 04-ի որոշմամբ քաղաքացիական գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 05-ի վճռով հայցը մերժվել է, իսկ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանվել է մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նշված վճռի դեմ 2021 թվականի սեպտեմբերի 06-ին իր ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանի միջոցով վերաքննիչ բողոք է բերել հայցվոր Ա.Ղահրամանյանը:

Վերաքննիչ բողոքն ու քաղաքացիական գործը Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) դատական կազմին են հանձնվել 2021 թվականի սեպտեմբերի 10-ին:

Վերաքննիչ դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի չվճարված մասի վճարման ժամկետը հետաձգելու մասին հայցվոր Ա.Ղահրամանյանի ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, վերաքննիչ բողոքն ընդունվել վարույթ և նշանակվել դատաքննության:

Վերաքննիչ դատարանի 2021 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 05-ի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել. ներկայացված հայցը՝ բավարարվել մասնակի՝ 685.200 (վեց հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով:

Նշված որոշման դեմ հայցվոր Ա.Ղահրամանյանն ու պատասխանող Ա.Գասպարյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքներ:

Վճռաբեկ բողոքին կից հայցվոր Ա.Ղահրամանյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը ներկայացրել է նաև միջնորդություն՝ պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ:

Գերագույն դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ հայցվոր Ա.Ղահրամանյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի միջնորդությունը բավարարվել է և վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

2. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

2.1 Ըստ հայցվոր Ա.Ղահրամանյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ, 1059-րդ, 1061-րդ, 1100-րդ և 1101-րդ հոդվածների, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ և 229-րդ հոդվածների պահանջները:

Նշվածը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ կերպ.

Ըստ բողոքաբերի՝ առևտրի սրահ կառուցելու համար հողամասը ձեռք է բերվել իր կողմից և իր ցանկությամբ գրանցվել պատասխանող Ա.Գասպարյանի անունով: Ընդ որում, և առևտրի սրահը, և այդ սրահի մակերեսի չափից ահռելի ավել չափով կցակառույցներն իրականացրել է Հայցվորը՝ բացառապես իր միջոցներով, որպեսզի իր ընտանիքի, մասնավորապես, նաև երեխաների համար ստեղծի գույք /կապիտալ/: Սակայն, նրա և Արմինե Գասպարյանի հարաբերությունները վատանալուց հետո, առևտրի սրահը պատասխանող Ա.Գասպարյանը նվիրել է հորը, դրանով Հայցվորին ու իր երեխաներին զրկելով գույքից, ուստի և ստացվում է, որ պատասխանողներն անհիմն հարստացել են Հայցվորի հաշվին, վնաս են պատճառել նրան ու նրա ներդրած գումարները փոշիացրել:

Ըստ բողոքաբերի՝ Հայցվորի պահանջը հիմնավորված է նրա և նրա կողմից հրավիրված վկաների ցուցմունքներով: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը, անտեսելով համանման հիմքով ԸԲԴ/2343/02/16 քաղաքացիական գործով վերադաս դատարանների դիրքորոշումը, նշել է, որ նյութական և ֆիզիկական աջակցությունն իրականացվել է փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվելու ժամանակահատվածում՝ Հայցվորի կամքով և ցանկությամբ՝ առանց հետագա պարտավորական հարաբերության ակնկալիքի: Այդ այն դեպքում, երբ Հայցվորը նշել է, որ իրեն վնաս է պատճառվել, իր հաշվին անհիմն հարստացում է տեղի ունեցել, քանի որ նա ժամանակին մտածում էր, որ գործում է ի շահ իրեն:

Վերաքննիչ դատարանը, իր հերթին, գումարի գանձումը դիտարկել է միայն անհիմն հարստացման շրջանակներում, այն դեպքում, երբ միաժամանակ փաստված էր հայցի հիմքում պատճառված վնասի մասին ևս: Բացի այդ, անկախ այն հանգամանքից, թե հայցվորը հայցի իրավական հիմք նշել է թե ոչ, մինևույն է դատարանը պետք է պատշաճ և օբյեկտիվ քննության արդյունքներով փաստեր, որ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ են ծագել կողմերի միջև, ուստի առաջին գործարքի արդյունքում կատարած շինաշխատանքների արժեքը ենթակա էր գանձման այդ հիմքով ևս:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանը, նշելով, որ Հայցվորը վկայակոչված փաստերը հիմնավորող բավարար ապացույցներ չի ներկայացրել, անտեսել է գործում առկա այն փաստական հանգամանքները և փաստերը, այդ թվում՝ ապացույցները, ըստ որոնց ապացուցվել է Հայցվորի կողմից ըստ փուլերի կատարված աշխատանքների բնույթը և ծավալը: Նշվածը ամրագրված է փորձագետի եզրակացությամբ: Պատասխանող կողմը չի հերքել դրանք և չի ապացուցել, որ իրենք են կատարել այդ աշխատանքները, այլ միայն նշել են, թե՛ իբր իրենց գումարներով է Հայցվորն այդ ամենն իրականացրել:

Նշվածի հաշվառմամբ հայցվոր Ա.Ղահրամանյանը խնդրել է բողոքարկվող մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2021 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը և հայցը բավարարել:

2.2 Ըստ պատասխանող Ա.Գասպարյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ և 230-րդ հոդվածների պահանջները, սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1051-րդ, 1059-րդ, 1100-րդ, 1103-րդ հոդվածները:

Նշվածը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ կերպ.

Գործի նյութերից դիտվում է, որ հողամասը, որի վրա կառուցվել է առևտրի սրահը, գրանցվել է Արմինե Գասպարյանի անվամբ, ինչի մասին տեղեկացված էր Հայցվորը: Առևտրի սրահը կառուցվել է Հայցվորի կամքով և պատասխանող Ա.Գասպարյանի համաձայնությամբ՝ առանց Հայցվորի մոտ պարտավորությունների առաջացման պայմանների:

Նշված աշխատանքները նպատակ չեն հետապնդել կանխել այլ անձին կամ նրա գույքին պատճառվելիք վնասը, կատարել նրա պարտավորությունները կամ պաշտպանել նրա այլ օրինաչափ շահերը: Հայցվորը գիտակցում էր, որ հողամասն ու առևտրի սրահը սեփականության իրավունքով պատկանում են պատասխանող Արմինե Գասպարյանին: Այսինքն, չեն կարող դիտվել նրա գործողությունները նաև այնպես, որ, իբր, նա սխալմամբ ենթադրել է, որ գործում է ի շահ իրեն:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտում վկայակոչելով գործով որպես վկա հարցաքննված պաշտարի աշխատանքներ իրականացնող Հայցվորի մորաքրոջ որդի Արտուշ Բաղասի Ծատրյանի, բանվորական և արմատուրայի աշխատանքներ իրականացնող Լեոնիկ Յուրիի Գրիգորյանի, ինչպես նաև էլեկտրասնուցման և զողման աշխատանքներ իրականացնող Արմիկ Ալբերտի Սուլեյմանյանի ցուցմունքներն այն մասին, որ Մուրադ Ծատրյանը կատարած աշխատանքների դիմաց Հայցվորի հայր Մուրադ Ղահրամանյանից ստացել է շինարարական նյութեր, Արմիկ Սուլեյմանյանը՝ կատարած աշխատանքների դիմաց մոտ 2 մլն. դրամի շինանյութ, իսկ Լեոնիկ Գրիգորյանը՝ Հայցվորից 120.000 ՀՀ դրամից ավելի գումար, ապացուցված է համարել Հայցվորի կողմից առևտրի սրահի կառուցման վրա ընդհանուր առմամբ 685.200 ՀՀ դրամ ծախսելու փաստը: Այնուհետև արձանագրել է, որ այդ գումարը սեփականության իրավունքով պատկանում է Հայցվորին և այն առանց օրենքով կամ իրավական ակտերով ամրագրած հիմքերի գտնվում է Պատասխանողների տիրապետության տակ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերդի Գասպարյանն անհիմն հարստացման իրավահարաբերության կողմ չի հանդիսանում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված գումարը ենթակա է գանձման միայն պատասխանող Արմինե Գասպարյանից:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումները չեն բխում գործի նյութերից, քանի որ ինչպես դիտվում է նաև Վերաքննիչ դատարանի որոշումից՝ աշխատանքների կատարման դիմաց պաշտար Արտուշ Ծատրյանն ու զողող, էլեկտրասնուցման աշխատանքներ կատարող Արմիկ Սուլեյմանյանը Հայցվորի հայր ծնողից են ստացել շինանյութեր, իսկ Հայցվորից ոչ մի գումար չեն ստացել: Այսինքն, Հայցվորի մոտ գույքի պակասեցում չի արձանագրվել:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ, մասնակի՝ հայցը բավարարելու մասով, բեկանել ԸԻԴ/1396/02/19 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 2021 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 05-ի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայցվորն ու պատասխանող Արմինե Գասպարյանը 2000-2015 թվականները գտնվել են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ:

2) Ստեփանակերտի քաղաքապետի 2003 թվականի մարտի 28-ի թիվ 239 որոշմամբ բավարարվել է Արմինե Գասպարյանի խնդրանքը և Ստեփանակերտ քաղաքի թիվ 46-րդ թաղամասում, ըստ կցված ուրվագծի, հատկացվել է 57,6քմ մակերեսով հողատարածք՝ առևտրի սրահի կառուցման համար:

3) Ստեփանակերտի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 19-ի թիվ 229 որոշմամբ օրինականացվել է Ստեփանակերտ քաղաքի թիվ 46-րդ թաղամասում գտնվող Արմինե Գասպարյանի առևտրի սրահի 27,0քմ մակերեսով կցակառույցը՝ ըստ կցված ուրվագծի, և հողամասն ընդարձակվել

94,68քմ մակերեսով, այն ուղղակի վաճառքի ձևով օտարելով Ա.Գասպարյանին: Ըստ նշված որոշման հողամասի ընդարձակումից հետո առևտրի սրահի ընդհանուր մակերեսը կազմել է 152,28քմ:

4) Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 094809 վկայականի համաձայն՝ 2008 թվականի հունիսի 05-ին Ստեփանակերտ քաղաքի թիվ 46-րդ թաղամասում գտնվող առևտրի սրահի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-12 մատյանի 013995 համարի տակ գրանցվել է Արմինե Վերդիի Գասպարյանի սեփականության իրավունքը:

5) Հայցվորն ու պատասխանող Արմինե Գասպարյանը վարելով համատեղ տնտեսություն, իրենց միջոցների հաշվին սեփական կամքով և ցանկությամբ կատարել են ծախսեր, մասնավորապես կառուցել են վիճարկվող առևտրի սրահը, և փոխադարձ համաձայնությամբ սրահի նկատմամբ գրանցվել է Արմինե Գասպարյանի սեփականության իրավունքը:

6) Անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով նվիրատուն՝ Արմինե Գասպարյանը, առևտրի սրահը նվիրել է նվիրառուին՝ Վերդի Գասպարյանին:

7) Առաջին ատյանի դատարանը մերժել է ներկայացված հայցը, հետևյալ հիմնավորմամբ. «... առևտրի սրահի կառուցման համար տրամադրված գումարներն անհիմն հարստացում չեն կարող համարվել, քանի որ բացակայում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածով սահմանված անհիմն հարստացման պարտադիր հատկանիշները»:

8) Վերաքննիչ դատարանը որոշել է հայցը բավարարել մասնակիորեն՝ հետևյալ հիմնավորմամբ. «... Պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի արժեքն ավելացել է Հայցվորի ներդրած միջոցների և կատարած աշխատանքների արդյունքում: Այսինքն՝ նրանք Հայցվորի հաշվին 685.200 ՀՀ դրամի չափով ձեռք են բերել և խնայել գույք, որը ենթակա է վերադարձման, որի ապացուցման բեռը կրող Հայցվորը նշված փաստն ապացուցել է հայցադիմումով, իր և վկաների ցուցմունքներով, և մասամբ՝ կատարված աշխատանքի արժեքի մասով՝ նաև փորձագետի եզրակացությամբ, իսկ գույքը ձեռք բերողները՝ Պատասխանողները, որոնք պետք է ապացուցեն, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը՝ Հայցվորը, գիտեր իր և գույքը ձեռք բերողի միջև պարտավորության բացակայության մասին և, որ նա այդ գումարը ներդրել է բարեգործական նպատակներով, այդ փաստը հիմնավորող՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված որևէ ապացույց չեն ներկայացրել...»:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքները վերաբերում են անհիմն հարստացման քաղաքացիաիրավական ինստիտուտին և դրա արտաձմանը գործի փաստական հանգամանքներին: Նշվածից բացի, Հայցվոր կողմը բարձրացրել է նաև սույն քաղաքացիական գործով դեվիկտային պարտավորություններն ու գործարքի անվավերության հետևանքները կանոնակարգող իրավանորմերի կիրառելիության հարցը:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում, նախ՝ վեր հանել անհիմն հարստացման իրավական կարգավորման էությունը և դրա լույսի ներքո գնահատական տալ սույն գործի փաստերին, իսկ այնուհետ՝ անդրադառնալ Հայցվորի վճռաբեկ բողոքի մյուս հիմքին: Այսպես՝

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Վերը նշված հոդվածով նախատեսված իրավակարգավորման վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կարող են ծագել քաղաքացիական շրջանառության սուբյեկտների ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ գործողություններից: Այդպիսին է, մասնավորապես, անհիմն հարստացման արդյունքում ծագած պարտավորությունը (կոնդիկցիոն պարտավորություն): Վերջինս առաջանում է, երբ առանց իրավական հիմքի ձեռք է բերվում կամ խնայվում ուրիշի գույքը, այդ թվում՝ աշխատանք, ծառայություն և այլն: Ընդ որում՝ հարստացման անհիմն լինելու հանգամանքով էլ պայմանավորված՝ կոնդիկցիոն պարտավորությունները դասվում են արտապայմանագրայինների շարքին:

Գերագույն դատարանը փաստում է, որ անհիմն հարստացման քաղաքացիաիրավական ինստիտուտի նպատակը քաղաքացիական շրջանառության մասնակիցների գույքային իրավունքների պաշտպանության իրականացումն ապահովելն ու դրան նպաստելն է՝ գույքի սխալ բաշխման արդյունքում քաղաքացիաիրավական շրջանառության մասնակիցների խախտված իրավունքները դրանց ճիշտ վերաբաշխման միջոցով վերականգնելու եղանակով: Ինստիտուտի մյուս կարևոր առանձնահատկությունը դրա սուբսիդիար բնույթն է, որի շնորհիվ շատ հաճախ կոնդիկցիոն հայքը խախտված գույքային իրավունքների պաշտպանության միակ հնարավոր միջոցն է:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվել է, որ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռքբերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռքբերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ նույն օրենսգրքի 1107-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից, անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Գերագույն դատարանն արդեն իսկ ԸԻԴ/0993/02/21 քաղաքացիական գործով 2021 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ ներկայացրել է անհիմն հարստացման ինստիտուտի վերաբերյալ իր դիրքորոշումը, արձանագրելով, որ անհիմն հարստացման վերաբերյալ խոսք կարող է գնալ միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. անձը (ձեռք բերողը) այլ անձի (տուժողի) հաշվին պետք է ձեռք բերի կամ խնայի գույք, այսինքն՝ ձեռք բերողի մոտ գույքի ավելացումը պետք է պայմանավորված լինի տուժողի մոտ գույքի պակասեցմամբ,

2. գույքի ձեռք բերումը կամ խնայումը տեղի է ունեցել առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացումն անօրինական ձևով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը տարբերում է անհիմն հարստացման երկու տեսակ՝

ա/ առանց բավարար հիմքի գույքի ձեռքբերում,

բ/ առանց բավարար հիմքի գույքի խնայում:

Գույքի ձեռք բերումը ոչ միայն գույքի փաստացի ստանալը, իր տնտեսությունում ունենալն է, այլև գույքային իրավունք ձեռք բերելը: Այս դեպքում տեղի է ունենում ձեռք բերողի գույքի ավելացում: Խնայողության դեպքում անձը պետք է իր գույքի հաշվին կատարեր որոշակի ծախսեր, սակայն դա չի անում՝ ի հաշիվ տուժողի ծախսերի, որի արդյունքում անհիմն հարստացողի գույքի ծավալային փոփոխություն տեղի չի ունենում: Սակայն, գույքի ձեռքբերումը կամ խնայողությունը կարող են որակվել որպես անհիմն հարստացում միայն այն պարագայում, երբ կատարվել են անօրինական եղանակով, այն է՝ առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի: Հետևաբար, կոնդիկցիոն պարտավորությունների առկայության վերաբերյալ վեճ քննելիս դատարանների խնդիրն է պարզել, թե արդյոք անձի մոտ առկա է գույքի ձեռքբերում կամ խնայում, իսկ դրական պատասխանի դեպքում, թե արդյոք դա կատարվել է անօրինական եղանակով: Ընդ որում, նշվածների առկայության վերաբերյալ ապացույցները պետք է ներկայացնի հայցվոր կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

2. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

(...):

6. Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

(...):»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայցվորը պահանջում է Պատասխանողներից բռնագանձել իր հաշվին նրանց կողմից անհիմն ձեռք բերված գույքի արժեքը: Որպես պահանջի փաստական հիմնավորում Հայցվորը նշում է իր և պատասխանողներից Արմինե Գասպարյանի միջև 2000-2015թթ. փաստական ամուսնության մեջ լինելու փաստը, որի ընթացքում ինքը՝ իր կամքով և ցանկությամբ, ձեռք է բերել առևտրի սրահ կից հողատարածքով, այն վերանորոգել և ձևակերպել Արմինե Գասպարյանի անունով: Իսկ հայցի իրավական հիմքում վկայակոչել է անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններին վերաբերող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ գլխի կարգավորումները:

Առաջին աստիճանի դատարանը մերժել է ներկայացված հայցը, հետևյալ հիմնավորմամբ. «... առևտրի սրահի կառուցման համար տրամադրված գումարներն անհիմն հարստացում չեն կարող համարվել, քանի որ բացակայում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածով սահմանված անհիմն հարստացման պարտադիր հատկանիշները»:

Վերաքննիչ դատարանը բեկանել է կայացված դատական ակտը և որոշել հայցը բավարարել մասնակիորեն՝ հետևյալ հիմնավորմամբ. «... Պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի արժեքն ավելացել է Հայցվորի ներդրած միջոցների և կատարած աշխատանքների արդյունքում: Այսինքն՝ նրանք Հայցվորի հաշվին 685.200 ՀՀ դրամի չափով ձեռք են բերել և խնայել գույք, որը ենթակա է վերադարձման, որի ապացուցման բեռը կրող Հայցվորը նշված փաստն ապացուցել է հայցադիմումով, իր և վկաների ցուցմունքներով, և մասամբ՝ կատարված աշխատանքի արժեքի մասով՝ նաև փորձագետի եզրակացությամբ, իսկ գույքը ձեռք բերողները՝ Պատասխանողները, որոնք պետք է ապացուցեն, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը՝ Հայցվորը, գիտեր իր և գույքը ձեռք բերողի միջև պարտավորության բացակայության մասին և, որ նա այդ գումարը ներդրել է բարեգործական նպատակներով, այդ փաստը հիմնավորող՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված որևէ ապացույց չեն ներկայացրել...»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հաստատված են համարվել որոշակի գումարի շրջանակներում Հայցվորի մոտ գույքի պակասի և այդ չափով պատասխանողների մոտ գույքի ավելացման փաստերը, սակայն որևէ կերպ չեն քննարկվել տեղի ունեցածի իրավական հիմքերը:

Գերագույն դատարանը փաստում է, որ Հայցվորի կողմից կատարված բոլոր աշխատանքները և գույքի ձեռք բերումը կատարվել են նրա ազատ կամքով և ցանկությամբ՝ ի շահ իրեն և իր ընտանիքի: Այսինքն՝ Հայցվորի կողմից առկա է միակողմանի գործարքի կատարում, որից էլ հետևում է, որ բացակայում է վերը վկայակոչված՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածով սահմանված անհիմն հարստացման փաստը հաստատող վավերապայմաններից մեկը՝ գույքի ձեռք բերումը կամ խնայումը տեղի է ունեցել առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի, այսինքն՝ հարստացման անօրինական ձևը:

Նշվածների հաշվառմամբ, Գերագույն դատարանը գտնում է, որ գործում առկա ապացույցները որևէ հիմք չեն տալիս ներկայացված հայցը, նույնիսկ՝ մասնակիորեն, բավարարելու վերաբերյալ եզրահանգում անելու համար, ուստի սույն գործի շրջանակներում Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելով և փոփոխելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքների նորմերի խախտում:

Ինչ վերաբերում է սույն քաղաքացիական գործի լուծման համար դեղիկ-տային պարտավորությունները կամ գործարքի անվավերության հետևանքները սահմանող իրավանորմերը կիրառելի լինելու վերաբերյալ Հայցվորի վճռաբեկ բողոքի հիմքին, ապա Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1061-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են.

«1. Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

2. Վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել...»:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դեղիկտային պարտավորության առաջացման համար պարտադիր պայման է իրական վնասի, իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների ու ոչ

օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստական հանգամանքներից միանշանակ բխում է, որ պատասխանողները որևէ ոչ իրավաչափ վարքագիծ չեն դրսևորել: Իր հերթին, սույն որոշմամբ բերված պատճառաբանություններից ակնհայտ է, որ Հայցվորի և պատասխանողների միջև որևէ գործարք չի կնքվել, իսկ Հայցվորի կատարած բոլոր աշխատանքներն ու տրամադրած գույքը նրա իսկ գիտակցված գործողությունների արգասիքն են: Նշվածներից բխում է, որ սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ ոչ դելիկտային պարտավորությունները, և ոչ էլ գործարքի անվավերության հետևանքները սահմանող քաղաքացիաիրավական նորմերը կիրառելի չեն:

Ամփոփելով, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը, հետևյալ պատճառաբանությամբ՝

համաձայն ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է նշված կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Գերագույն դատարանի եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ ներկայացված հայցը՝ մերժման, գտնում է, որ պետական տուրքից և փորձագետին վճարված գումարներից բաղկացած դատական ծախսերը պետք է կրի Հայցվորը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Հայցվորը բոլոր դատական ատյաններում պակաս է վճարել պետական տուրքի գումարները, ընդհանուր՝ 241.028 (երկու հարյուր քառասունմեկ հազար քսանութ) ՀՀ դրամի չափով: Հետևաբար, պետք է Հայցվորից հոգուտ Արցախի Հանրապետության գանձել նշված, ինչպես նաև՝ հոգուտ պատասխանող Ա.Գասպարյանի՝ փորձագետին վճարված և վճարելի բողոք ներկայացնելու համար պետական տուրքի գումարները՝ 58.860 (հիսունութ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 256-րդ հոդվածի 1-ին մասով, Գերագույն դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Արայիկ Ղահրամանյանի վճարելի բողոքը մերժել:
2. Պատասխանող Արմինե Գասպարյանի վճարելի բողոքը բավարարել: Բեկանել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2021 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը և օրինական ուժ տալ Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 05-ի վճռին:
3. Արայիկ Ղահրամանյանից հոգուտ Արմինե Գասպարյանի գանձել 58.860 (հիսունութ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որպես փորձագետին վճարված և վճարելի բողոք ներկայացնելու համար պետական տուրքի փոխհատուցման գումար:
- Արայիկ Ղահրամանյանից հոգուտ Արցախի Հանրապետության գանձել 241.028 (երկու հարյուր քառասունմեկ հազար քսանութ) ՀՀ դրամ, որպես հայցադիմում, վերաքննիչ և վճարելի բողոքներ ներկայացնելու համար պակաս վճարված պետական տուրքի գումար:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել Հայցվորի ներկայացուցիչ Վ.Իշխանյանը և ներկայացուցիչ Ա.Օհանյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2021թ. սեպտեմբերի 13-ի որոշմամբ բողոքները վերադարձրել է՝ որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու հիմքով:

2021թ. սեպտեմբերի 24-ին Հայցվորի ներկայացուցիչ Վ.Իշխանյանը կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանը 2021թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ կրկին բերված վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և նշանակել դատաքննության:

Վերաքննիչ դատարանը 2021թ. նոյեմբերի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է: ԸԻԴ/0199/02/21 քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 2021թ. օգոստոսի 10-ի վճիռը մասնակիորեն բեկանել և հայցը բավարարել է ամբողջությամբ: Ռ.Սևյանից հոգուտ Է.Բաբայանի գանձել է 53.800 /հիսուներեք հազար ութ հարյուր/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար: Ռ.Սևյանից հոգուտ Է.Բաբայանի գանձել է 1.324.751 /մեկ միլիոն երեք հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր հիսունմեկ/ ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. հուլիսի 14-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել է՝ մինչև որոշման ամբողջությամբ կատարումը: Դատական ակտը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել Պատասխանող Ռ.Սևյանը և նրա ներկայացուցիչ Ա.Ապրեայանը՝ միջնորդելով վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին:

Գերագույն դատարանը 2021թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ բավարարել է ներկայացված միջնորդությունը, հետաձգելով պետական տուրքի վճարումը և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայցվորի ներկայացուցիչ Վ.Իշխանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերները պնդում են, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքների նորմերի խախտումներով, այն է՝ Վերաքննիչ դատարանը չի կիրառել այն օրենքը, որը պետք է կիրառեր, կիրառել է այն օրենքը, որը կիրառման ենթակա չէր, սխալ է մեկնաբանել օրենքը, չի կատարել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու գնահատում, որն ազդել է գործի ելքի վրա ու հանգեցրել վեճի սխալ լուծմանը: Արդյունքում, Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված չէ, խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտվել են Պատասխանողի իրավունքներն ու շահերը և վերջինիս համար առաջացրել են ծանր հետևանքներ:

Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 44-47-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 121-րդ, 122-րդ, 231-րդ, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 877-րդ, 878-րդ, 880-րդ հոդվածները, խախտել է ԱՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

Նշված պնդումները բողոքաբերները հիմնավորում են հետևյալ պատճառաբանությամբ.

Շարադրելով վկայակոչած նորմերի բովանդակությունը, բողոք բերողները, մասնավորապես նշում են, որ այն եզրահանգումը, թե Ռ.Սկյանի կողմից 2017թ. օգոստոսի 15-ին ստորագրված պարտավորագիրն ինքնին հանդիսանում է պարտավորական իրավահարաբերության ծագման հիմք և հաստատում վերջինիս որոշակի գումար տրամադրելու փաստը, լրիվությամբ անհիմն է և չի բխում ՀՀ և ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքերի վերը շարադրված հոդվածների պահանջներից:

Բողոք բերողները պնդում են, որ գործում առկա «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթուղթը չի կարող դիտվել գրավոր փոխառության պայմանագիր, քանի որ այն չի բովանդակում փոխառուի կողմից փոխառուին միևնույն քանակի գումար հանձնելու և նշված գումարը վերադարձնելու պարտավորության մասին պայմաններ:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով քաղաքացիական գործին կցված «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթղթի պատճենը, անհիմն եզրահանգել է, որ որպես ապացույց Հայցվորի կողմից ներկայացված փաստաթուղթն իր բովանդակությամբ հավաստում է, որ Պատասխանողը Հայցվորից փոխարինաբար վերցրել է դրամական գումար՝ 55.000 /հիսունհինգ հազար/ ԱՄՆ դոլար և պարտավորություն է ստանձնել այդ պարտքը ամսական 1.000 /հազար/ ԱՄՆ դոլարի չափով վճարելու եղանակով վերադարձնել, ու գտել է, որ տվյալ պարտավորագրի պատճենը կողմերի միջև գրավոր պայմանագրի մասին վկայող բավարար և ուղղակի ապացույց է: Բողոքաբերները անհիմն են համարում Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը, քանի որ Հայցվորի կողմից դատարան չի ներկայացվել «Պարտավորագիր» փաստաթղթի բնօրինակը, մինչդեռ այդ հարցը բարձրացվել է ստորադաս դատարաններում՝ դատաքննության ընթացքում: Առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում Հայցվորի ներկայացուցիչը հայտարարել է նաև, որ չի կարող նշել, թե որտեղ և ինչ հանգամանքներում է կազմվել «Պարտավորագիր»-ը, այն կազմելու ժամանակ Պատասխանողին գումար փոխանցվել է, թե՛ ոչ, քանի որ Հայցվորն իրեն տեղեկատվություն չի տրամադրել: Նման փաստական հանգամանքների առկայության պարագայում, Վերաքննիչ դատարանը՝ «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթղթի պատճենի հիման վրա, հիմնավորված և ապացուցված է համարել հայցապահանջը, բավարարելով այն, ինչի արդյունքում խախտվել են նյութական և դատավարական նորմեր ու խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Բողոքաբերները չեն ընդունել և վիճարկել են փոխառության պայմանագիրն այն հիմքով, որ իրականությանը չի համապատասխանում հայցապահանջի այն հիմնավորումը, թե Հայցվորը 2017թ. օգոստոսի 15-ը պարտավորագրի տալու օրն է փոխառությամբ Հայցվորից ստացել 55.000 /հիսունհինգ հազար/ ԱՄՆ դոլար: Նշված պարտավորագիրը Հայցվորի խնդրանքով կազմվել է ԱՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղում, պարտավորագրի մեջ նշված անձանց՝ Հովիկ Սկյանի և նրա կնոջ՝ Վարդուհի Սկյանի ներկայությամբ, ով հանդիսանում է Պատասխանողի հորեղբոր աղջիկը և խնդրել է նման պարտավորագիր տալ իրենց՝ պատճառաբանելով, որ ցանկանում է բնակության մեկնել ԱՄՆ ու, որ նման պարտավորագիրը կօգնի իրենց, քանի որ կապացուցվի, որ իրենք ունեն դրամական միջոցներ, սակայն գումար նրանք չեն տվել, ուղղակի հորեղբոր աղջկան օգտակար լինելու համար Ռ.Սկյանը համաձայնվել ու տվել է նշված պարտավորագիրը:

Բողոքաբերները, շարադրելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածը, նշել են, որ օրենքի պահանջն է հանդիսանում գրավոր փաստաթղթերը բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի տեսքով ներկայացնելը, սակայն այդ պահանջը չի պահպանվել Հայցվորի կողմից, իսկ Վերաքննիչ դատարանը դա անտեսել է:

Բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2021թ. նոյեմբերի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2021թ. օգոստոսի 10-ի վճռին կամ քաղաքացիական գործը վերադարձնել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Վճռաբեկ բողոքի պատասխանում Հայցվորի ներկայացուցիչը նշում է, որ մի շարք նախադեպային որոշումներում Գերագույն դատարանն անդրադարձել է պարտավորագրերի ապացուցողական նշանակությանը, ուստի Ռ.Սևյանի կողմից ստորագրված «Պարտավորագիր»-ն ինքնին հանդիսանում է պարտավորական իրավահարաբերության ծագման հիմք և վկայում է Հայցվորի կողմից Պատասխանողին որոշակի գումար տրամադրելու մասին: Բացի այդ, Պատասխանողը ոչ միայն ընդունել է, այլ երբեք չի վիճարկել պարտավորագիրն իր կամքով ստորագրելու փաստը:

Հայցվորի ներկայացուցիչը նշել է նաև, որ պարտավորագրի բնօրինակը ոչ միայն առկա է, այլ դատարանի պահանջով կարող է ներկայացվել: Պատասխան ներկայացնողը նշել է նաև, որ փոխառության գումարը չստանալու փաստը Պատասխանողը չի ապացուցել:

Հայցվորի ներկայացուցիչը գտնում է, որ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկներն անհիմն են, այսինքն, բացակայում է որևէ դատական սխալ, ուստի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Պատասխանողի և Հայցվորի ստորագրությամբ 2017թ. օգոստոսի 15-ին կազմվել է «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթուղթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ես՝ Ռուզաննա Փաշայի Սևյանս /անձն. AM 0825957 տրվ. 15.08.12թ. 070-ի կողմից/ պարտավորվում եմ Էդուարդ Հոկտենի Բաբայանին /անձն. AM 0543835 տրվ. 02.12.11թ. 004-ի կողմից/, վերադարձնել 55.000 /հիսունհինգ հազար/ ԱՄՆ դոլարի չափով պարտքը, որի համար ստորագրում եմ «ստորագրություն» Ռ.Սևյան 15/VIII-2017: Պարտավորվում եմ հիշյալ պարտքը մարել ամսական 1000 /հազար/ ԱՄՆ դոլարի չափով... Էդուարդ Հոկտենի Բաբայան «ստորագրություն»:

2. Ստորադաս դատարաններում գործի նյութերում առկա է եղել միայն պատշաճ կարգով չվավերացված «Պարտավորագիր» պատճենը:

3. Հայցվորի ներկայացուցիչը Գերագույն դատարանում նիստի ընթացքում ներկայացրել է «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթուղթ և հայտարարել է, որ այն հանդիսանում է վերը նշված պարտավորագրի բնօրինակը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի խախտման հետևանքով առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Այս առնչությամբ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում, նախ, անհրաժեշտ է անդրադառնալ դատական ակտերի փաստական և իրավական հիմնավորվածությանը, մասնավորապես

ապացուցողական նշանակություն ունեցող որևէ փաստաթղթի բնօրինակը՝ որպես գրավոր ապացույց դատարան ներկայացնելու պարտադիր հիմքերին:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր և իրեղեն ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Շայցի հիմքը կազմող իրավաբանական փաստը և հայցի առարկան հանդիսացող նյութափրավական պահանջը սկզբում համարվում են ենթադրյալ, վիճելի և կարող են հաստատվել միայն դատաքննության ընթացքում՝ դատական ապացուցման միջոցով, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից վկայակոչված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ: Ելնելով կողմերի դատավարական իրավահավասարության սկզբունքից՝ անհրաժեշտ է դատաքննության ընթացքում հետազոտել կողմերի ներկայացրած յուրաքանչյուր ապացույց, որը համապատասխանում է վերաբերելիության և թույլատրելիության պահանջներին՝ կողմերի պահանջներն ու առարկությունները հաստատելու կամ հերքելու համար:

Գերագույն դատարանը բազմիցս դիրքորոշում է հայտնել և փաստել, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով...: Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ գործում գտնվող փաստաթղթերի բնօրինակները, դրանք ներկայացրած անձանց միջնորդությամբ, վերադարձվում են դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Այս դեպքում գործում թողնվում է փաստաթղթի բնօրինակի՝ դատարանի կնիքով վավերացված պատճենը կամ քաղվածքը: Մեկնաբանելով սահմանված կանոնը, Գերագույն դատարանն արձանագրում է.

Ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավոր ապացույցները դատարան կարող են ներկայացվել կամ բնօրինակով, կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Մինչև նույն ժամանակ օրենսդիրը վերոնշյալ ընդհանուր կանոնից սահմանել է հետևյալ բացառությունները՝

ա/ փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն բոլոր այն դեպքերում, երբ գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական

ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն փաստաթղթերով,

բ/ անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է պահանջել ներկայացնելու փաստաթղթերի բնօրինակները: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ, մասնավորապես, երբ գործով ներկայացված միևնույն փաստաթղթերի պատճենները տարբերվում են իրենց բովանդակությամբ, և դատարանը չի կարող պարզել գրավոր ապացույցի իրական բովանդակությունն առանց դրա բնօրինակը հետազոտելու: Այդպիսի անհրաժեշտություն կարող է ծագել նաև պատճենի անորակության, դրա իսկության մեջ համոզվելու անհրաժեշտության և այլ դեպքերում:

Գերագույն դատարանը փաստում է, որ փոխառության իրավահարաբերության հետ կապված գործերով որպես պարտավորության առկայության փաստը հաստատող կամ հերքող ուղղակի ապացույց է հանդիսանում պարտքային փաստաթղթի /ստացականի, պարտավորագրի/ բնօրինակը: Երբ կողմը վկայակոչում է պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին, սակայն վկայակոչում է պարտավորությունը հիմնավորող փաստաթղթի բնօրինակի ներկայացնելու անհնարինությունը, ապա դատարանը պետք է պարտատիրոջը պարտավորեցնի պարտավորության առկայության փաստը հիմնավորել բացառապես պարտքային փաստաթղթի բնօրինակով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ կրել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բացասական հետևանքները:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատարանը յուրաքանչյուր գործով պետք է խստորեն պահպանի քաղաքացիադատավարական օրենսդրությամբ սահմանված ապացույցների ձեռքբերման և գնահատման կանոնները, ինչը բխում է կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներից:

Գերագույն դատարանը հարկ է համարում շեշտել, որ նմանատիպ գործերով պարտադիր է ուղղակի ապացույցի բնօրինակի առկայությունը, քանի որ պարտավորության ապացույց հանդիսացող փաստաթղթի բացակայությունը կարող է տեղի տալ հնարավոր չարաշահումների, օրինակ՝ վկայել կատարման հիմքով պարտավորագրի /ստացականի/ ոչնչացման, կամ նման պարտավորության բացակայության մասին: Դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը:

Գերագույն դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի փաստական և իրավական հիմնավորվածությանը: Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից նշված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ: Առաջին ատյանի դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված

ապացույցներով: Գերագույն դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում՝ ապացույցների պատշաճ գնահատման համատեքստում, տվել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտին առաջադրվող չափորոշիչները:

Այսպես՝ ԸԻԴ/0753/02/14 քաղաքացիական գործով Գերագույն դատարանը 2015 թվականի հունիսի 23-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «... գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից նշված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ (...) Առաջին ատյանի դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով: (...) յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման թե՛ իրավական և թե՛ փաստական հիմնավորումը: (...) Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառության մեջ, այն նորմի, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: (...) դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է ներկայացված ապացույցը դրվում որոշման հիմքում, կամ՝ մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին»:

Մույն գործով ապացույց է հանդիսացել «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթղթի լուսապատճենը, որի իրավական գնահատման արդյունքում Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է. «Անդրադառնալով Պատասխանողի ներկայացուցչի գործում առկա ապացույցի՝ «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթղթի լուսապատճենին և բնօրինակի բացակայությանը, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ փաստարկն անհիմն է, քանի որ 1/ պարտավորագրի բնօրինակը պահանջելու անհրաժեշտության վերաբերյալ Պատասխանողի ներկայացուցչին առարկել է, 2/ Դատարանը չի պահանջել ներկայացնելու դրա բնօրինակը, 3/ գործի դատաքննության ընթացքում հետազոտելով նշված գրավոր ապացույցը, դատարանն այն չի գնահատել որպես ոչ վերաբերելի, կամ ոչ թույլատրելի ապացույց՝ պատճենի տեսքով ներկայացված լինելու հանգամանքով պայմանավորված, 4/ Դատարանի նման դիրքորոշման վերաբերյալ վերաքննիչ բողոք չի ներկայացվել և ներկայացված վերաքննիչ բողոքի պատասխանում այն կասկածի տակ չի առնվել ...»: Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքի փաստարկները բավարար են Առաջին ատյանի դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու և հայցը բավարարելու համար:

Գերագույն դատարանը անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ և 51-րդ հոդվածներով հստակ սահմանված է գրավոր ապացույցների բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու պահանջը: Օրենսդրի կողմից նշված պահանջը պարտադրում է դատարաններին հիմնվել նշված օրենսդրական կարգավորումներին՝ ապացույցների թույլատրելիությունը, վերաբերելիությունն ու արժանահավատությունը քննարկելու և գնահատելու ընթացքում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատական նիստերի դահլիճում Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթուղթը՝ որն ըստ ներկայացնողի հանդիսանում է

գործում առկա փաստաթղթի լուսապատճենի բնօրինակը, և միջնորդել է այն կցել գործի նյութերին:

Գերագույն դատարանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված փաստաթուղթը կարևոր նշանակություն ունի գործի ըստ էության լուծման համար, որն ըստ Հայցվորի ներկայացուցչի՝ գործում առկա «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթղթի բնօրինակն է և այն չի հետազոտվել դատաքննության ընթացքում, քննարկման և գնահատման առարկա չի դարձվել, իսկ գործում առկա պատճենը վավերացված չէ պատշաճ կարգով, գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է նոր քննություն՝ առկա ապացույցը պատճենի հետ համադրելու, դրա արժանահավատությունը պարզելու և այդ համատեքստում գործով բազմակողմանի, օբյեկտիվ քննություն իրականացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործի լրիվ, բազմակողմանի քննություն չի իրականացրել, ամբողջությամբ չի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, գրավոր ապացույցի՝ «Պարտավորագիր» վերտառությամբ փաստաթղթի բնօրինակի բացակայության, առանց նշված ապացույցը քննարկման և գնահատման առարկա դարձնելու և նշվածի՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջի խախտմամբ ոչ պատշաճ ապացույցը գնահատելով, հանգել է ոչ հիմնավոր եզրահանգման՝ հայցապահանջի հիմնավորվածության վերաբերյալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը բավարար է դիտում Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար: Ուստի, տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը բավարարելու, դատական ակտը բեկանելու և գործը Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու Գերագույն դատարանի լիազորությունը:

Հաշվի առնելով սույն գործով նոր քննության անհրաժեշտությունը, Գերագույն դատարանը չի անդրադառնում նյութական իրավունքի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին:

6. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, անհրաժեշտ է անդրադառնալ վճռաբեկ բողոքի ներկայացման հետ կապված պետական տուրքի հարցին, իսկ դատական մյուս ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ նոր քննության արդյունքներով:

Սույն գործով բողոքաբերը միջնորդություն էր ներկայացրել Գերագույն դատարանին՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին և խնդրել է պետական տուրքի հարցին անդրադառնալ վերջնական դատական ակտ կայացնելիս: Նշված միջնորդությունը բավարարվել և պետական տուրքի վճարումը հետաձգվել է Գերագույն դատարանի 2021թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ:

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է պետական տուրքի գծով արտոնությունների ցանկը: Անդրադառնալով վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական տուրքի հարցին՝ Գերագույն դատարանը գտնում է, որ հաշվի առնելով Պատասխանողի գույքային դրությունը, կիրառելի է «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված պետական տուրքի վճարումից ազատման արտոնությունը: Ըստ այդմ, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածի «գ» կետը, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 256-րդ հոդվածով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2021թ. նոյեմբերի 4-ի որոշումը՝ գործն ուղարկելով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ նոր քննության արդյունքներով: Վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախատեսված պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2020թ. հուլիսի 14-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հետո՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Հ.ԽԱՉԱՏՏՅԱՆ
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ**